

3205

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽԱՅՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՈՒՐՋԸ

ԿՈՒԼԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՔՐԵՎ ԴԱՍԱԿԱՐԳ
ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ԳԼԽԱՊՏՈՒՅՏԸ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

3K33

Խ-11

Պ Ե Տ Ն Ր Ա Տ
ՅԵՐԵՎԱՆ 1932

3K33
ru-11

ի. ՍՏԱԼԻՆ

21 JUN 2005

20 NOV 2009

ԽՍՀՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁԸ

ԿՈՒԼԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՎ ԴԱՍԱԿԱՐԳ
ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ԳԼԽԱՊՏՈՒՅՏԸ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Հ Ե Տ Ե Վ Ա Ն Ք Ո Վ

ՊԱՏԱՍԻԱՆ ԸՆԿԵՐ
ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊԵՏՆՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 2

05 AUG 2013

3205

2005 JUL 15

Պետերատի տպարան
Գլավիտ 7074 (բ)
Պատվեր 262
Հրատ. 2026
Տիր. 1000



1714
39

Հանձնված է արտադրության 19/1 1932 ՍՏ. Ֆ. Ա

Ե.Ս.Հ.Մ. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐ- ՑԵՐԻ ՇՈՒՐՁԸ

ՃԱՌ ՄԱՐԲՍԻՍ-ԱԳՐԱՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ, 27-ԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
1929 ԹՎԻ

Ընկերներ: Մեր հասարակական-տնտեսական կյանքի ներկա
ժամանակի հիմնական փաստը, վոր այսօր ընդհանուրի ուշադրու-
թյունն է դրավում, դա կոլտնտեսական շարժման վիթխարա-
գույն անձան փաստն է:

Ներկայիս կոլտնտեսային շարժման բնորոշ գիծն այն է, վոր
կոլտնտեսությունները մեջ են մտնում վոչ միայն չքավորների ա-
ռանձին խմբերը, ինչպես դա յեղել է մինչև այժմ, այլ և՛ վոր իր
ամբողջ մասնայով կոլտնտեսություններն է մտնում նաև մի-
ջակը: Այս նշանակում է, վոր աշխատավոր գյուղացիության ա-
ռանձին շերտերի շարժումից կոլտնտեսային շարժումը գյուղա-
ցիության բազմամիլիոն հիմնական մասաների շարժման է վե-
րածվել: Սրանով ել, ի միջի այլոց, պետք է բացատրել հսկայա-
կան կարևորություն ունեցող այն փաստը, վոր հակալուրջային
հզոր և հարաձուռ հոսանքի բնույթ ստացած կոլտնտեսային շար-
ժումը սրբում է իր ճանապարհից կուլակի ընդդիմադրությունը,
փչրում է կուլակ տարրերին և ճանապարհ է բաց անում գյուղում
սոցիալիստական շինարարությունը լայնորեն ծավալելու համար:

Սակայն յեթե մենք հիմք ունենք պարծենալու սոցիալիստա-
կան շինարարության պրակտիկ հաջողություններով, ապա չի
կարելի նույնն ասել մեր տեսական աշխատանքի հաջողություննե-
րի մասին եկոնոմիկայի բնագավառում ընդհանրապես և գյուղա-
տնտեսության ասպարեղում մասնավորապես: Դեռ ավելին. պետք
է ընդունել, վոր տեսական միտքը հետ է մնում մեր պրակտիկ հա-
ջողություններից, վոր մեղանում վորոշ խզում է նկատվում պրակ-
տիկ հաջողությունների և տեսական մտքի դարդացման միջև:
Մինչդեռ անհրաժեշտ է, վոր տեսական աշխատանքը վոչ միայն

հասնի գործնականի հետևից, այլև նրանից առաջ անցնի՝ ղինելով մեր պրակտիկ աշխատողներին՝ նրանց կողմից սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Յես այստեղ յերկար չեմ խոսի թեորիայի նշանակութեան մասին. դա ձեզ բավական լավ հայտնի յե: Հայտնի յե, վոր թեորիան, յեթե դա իսկական թեորիա յե, կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզութիւն, աշխատանքի վստահութիւն և մեր գործի հաղթանակի հավատք ե ներշնչում պրակտիկ աշխատողներին: Այս ամենը մեր սոցիալիստական շինարարութեան համար խոշորագույն նշանակութիւն ունի և չի կարող այդպիսին չունենալ: Յայն այն ե, վոր մենք սկսում ենք կաշալ հենց այդ ասպարեզում՝ մեր եկոնոմիկայի խնդիրները տեսական մշակման ասպարեզում: Ինչո՞ւ պաւ բացատրել այն փաստը, վոր մեզանում մեր հասարակական-քաղաքական կյանքում դեռևս կան եկոնոմիկայի խնդիրներին վերաբերող զանազան բուրժուական և մանր-բուրժուական թեորիաներ: Ինչո՞ւ բացատրել, վոր այդ թեորիաներն ու խղճով տեսութիւնները մինչև այսօր ել արժանի հակահարվածը չեն ստանում: Ինչո՞ւ բացատրել, վոր մարքս-լենինյան քաղաքատնտեսութեան մի շարք հիմնական սկզբունքները, վոր լավագույն հակաթույն են բուրժուական և մանր-բուրժուական թեորիաների հանդէպ, սկսում են մոռացվել, չեն մասսայականացվում մեր մամուլի եջերում և անհայտ ե, թե ինչու առաջին տեղի չեն առաջադրվում: Մի՞թե դժվար ե ըմբռնել, վոր առանց անհաշտ պայքարի բուրժուական թեորիաների դեմ, հենվելով մարքս-լենինյան թեորիայի վրա՝ անհնարին ե լիովին հաղթել դասակարգային թշնամիներին:

Նոր պրակտիկան առաջ ե բերում նաև նոր մոտեցում փոխանցման շրջանի եկոնոմիկայի պրորլեմներին: Նոր ձևով ե դրվում այժմ նեպի խնդիրը, դասակարգերի, շինարարութեան տեմպերի, զոդման և կուսակցութեան քաղաքականութեան խնդիրը: Պրակտիկայից հետ չմնալու համար անհրաժեշտ ե հենց այժմ իսկ զբաղվել բոլոր այդ պրորլեմների մշակմամբ նոր պայմանների տեսակետից: Առանց դրան հնարավոր չե հաղթահարել մեր պրակտիկների մտքերը պղտորող բուրժուական թեորիաները: Առանց դրան անհնարին ե արմատախիլ անել նախապաշարումների կայունութիւն ձեռք բերած այդ տեսութիւնները: Վորովհետև թեորիայի մեջ արտահայտված բուրժուական նախապաշարումների դեմ

պայքարով ե միայն, վոր հնարավոր ե ամրացնել մարքսիզմ-լենինիզմի դիրքերը:

Թույլ տվեք այժմ անցնել թեորիա կոչվող բուրժուական այդ նախապաշարումներից դոնե միջանիսի բնութագրմանը և ցուցադրել նրանց սնանկութիւնը մեր շինարարութեան միջանի հանգուցային պրորլեմների լուսարանութեան կարգով:

1. «ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՒՄՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Դուք, իհարկե, գիտեք, վոր կոմունիստների շրջանում դեռևս գոյութիւն ունի մեր ժողովրդական տնտեսութեան սեկտորների հակասարակչութեան» թեորիան: Այդ թեորիան, հարկավ, վորևե առնչութիւն չունի մարքսիզմի հետ: Յեւ սակայն դա, այդ թեորիան քարոզվում ե աջ բանակում գտնվող մի շարք ընկերների կողմից: Ըստ այդ թեորիայի յենթադրվում ե, վոր մենք ունենք, նախ և առաջ, սոցիալիստական սեկտոր, վոր դա յուրատեսակ մի արկղ ե, և ապա՝ վոր բացի դրանից մենք ունենք վոչ-սոցիալիստական, յեթե կուզեք՝ կապիտալիստական սեկտոր, և վոր դա մի ուրիշ արկղ ե: Այդ յերկու արկղն ել դրված են տարբեր ռեւերի վրա և խաղաղորեն առաջ են դնում՝ իրար չհպչելով: Յերկրաչափութեանից հայտնի յե, վոր զուգահեռական գծերը չեն խաչաձևվում, իրար չեն հանդիպում: Սակայն այդ նշանավոր թեորիայի հեղինակները կարծում են, թե իրենց այդ գուգահեռականները յերբեք կհանդիպեն իրար, և յերբ նրանք իրար կհանդիպեն, մեզանում սոցիալիզմ կստեղծվի: Ընդ սմին հիշյալ թեորիան աչքաթող ե անում, վոր այդ՝ այսպես կոչված «արկղների» հետևում կանգնած են դասակարգերը, իսկ այդ «արկղների» շարժումը տեղի յե ունենում դասակարգային կատաղի պայքարի կարգով, կյանքի և մահվան պայքարի կարգով՝ «ով ում» սկզբունքով:

Դժվար չե հասկանալ, վոր այս թեորիան վորևե առնչութիւն չունի լենինիզմի հետ: Դժվար չե ըմբռնել, վոր այս թեորիան որչեկտիվորեն նպատակ ունի պաշտպանել գյուղացիական անհատական տնտեսութեան դիրքերը, ղինել կուլակային տարրերը «նոր» տեսական զենքով՝ կոլտնտեսութիւնների դեմ նրանց մղած պայքարում, վարկաբեկել կոլտնտեսութիւնների դիրքերը: Յեւ այնուամենայնիւ դա—այդ թեորիան—մինչև այժմ ել գործադրութիւն ունի մեր մամուլում: Յեւ չի կարելի ասել, թե նա արժանի ե

լուրջ հակահարված եւ ստանում, առավել ևս՝ Զախլախիչ հակահարված մեր տեսաբանների կողմից: Ինչո՞վ ապա բացատրել այս անհնթեթությունը, յեթե վոչ մեր տեսական մտքի հետամնացությամբ:

Մինչդեռ բավական եր միայն հրապարակ հանել մարքսիզմի գանձարանից վերարտադրության թեորիան և հակադրել այդպիսին սեկտորների հավասարակշռության թեորիային, վորպեսզի այս վերջինիցն այլևս հետք անգամ չմնար: Իսկապես, վերարտադրության մարքսիստական թեորիան ուսուցանում է, վոր արդի հասարակությունը չի կարող դարձանալ առանց տարեցտարի կուտակումներ անելու, իսկ կուտակումներ անելն անհնարին է առանց տարեցտարի ընդլայնված վերարտադրության: Այս պարզ է և հասկանալի: Մեր խոշոր, կենտրոնացված սոցիալիստական արդյունաբերությունը զարգանում է ըստ ընդլայնված վերարտադրության մարքսիստական թեորիայի, վորովհետև նա տարեցտարի աճում է իր ծավալով, ունի իր կուտակումները և առաջ է ընթանում յոթնամյոն քայլերով: Սակայն, մեր խոշոր արդյունաբերությամբ դեռևս չի սպառվում ժողովրդական տնտեսությունը: Ընդհակառակը, մեր ժողտնտեսության մեջ դեռևս դերակշռում է մանր-գյուղացիական տնտեսությունը: Կարելի՞ յե արդյոք ասել, թե մեր մանր-գյուղացիական տնտեսությունը զարգանում է ընդլայնված վերարտադրության թեորիայի սկզբունքով: Վո՞չ, այդ չի կարելի ասել: Մեր մանր-գյուղացիական տնտեսությունը վոչ միայն իր բովանդակ մասսայով տարեցտարի չի կենսադործում ընդլայնվող վերարտադրությունը, այլև ընդհակառակը՝ նա վոչ միշտ հնարավորություն ունի կենսադործելու անգամ իսկ պարզ վերարտադրությունը: Կարելի՞ յե արդյոք արագացված տեմպով առաջ մղել մեր սոցիալականացված ինդուստրիան, ունենալով այնպիսի գյուղատնտեսական բազա, ինչպիսին մանր-գյուղացիական տնտեսությունն է, վորն ընդունակ չե ընդլայնված վերարտադրության և վորը միևնույն ժամանակ զերակշռող ուժ է մեր ժողովրդական տնտեսության մեջ: Վո՞չ, չի կարելի: Կարելի՞ յե արդյոք քիչ թե շատ տեական ժամանակաշրջանում հենարան դարձնել խորհրդային իշխանության և սոցիալիստական շինարարության համար այդ յերկու տարբեր հիքերը—ամենախոշոր և միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքը և ամենացիրուցան ու հետամնաց մանր-ապրանքա-

յին գյուղացիական տնտեսության հիմքը: Վո՞չ, չի կարելի: Այս բանը մի որ պետք է վերջանա ամբողջ ժողովրդական տնտեսության լիակատար փլուզումով: Վո՞րտեղ է ապա յեղը: Յեղըն այն է, վոր խոշորացնենք գյուղատնտեսությունը, դարձնենք այն կուտակման և ընդլայնված վերարտադրության ընդունակ և վերակառուցենք այսպիսով ժողովրդական տնտեսության գյուղատնտեսական բազան: Բայց ի՞նչպես խոշորացնենք այդպիսին: Գրա համար կա յերկու ճանապարհ: Կա կապիտալիստական ճանապարհ, վոր կայանում է գյուղատնտեսության խոշորացման մեջ՝ կապիտալիզմի արմատացման միջոցով, վորպիսին տանում է դեպի գյուղացիության աղքատացումը և կապիտալիստական ձեռնարկությունների զարգացումը գյուղատնտեսության ասպարեզում: Այս ճանապարհը ժխտվում է մեր կողմից, վորպես խորհրդային տնտեսությանն անհարիր մի ճանապարհ: Կա և մի ուրիշ ճանապարհ—սոցիալիստական ճանապարհ, վոր կայանում է գյուղատնտեսության մեջ կոլտնտեսություններ և խորհրդատնտեսություններ ստեղծելում, վորն առաջնորդում է դեպի մանր-գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսություններում, վորոնք զինված կլինեն գլխավորությամբ և տեխնիկայով, և վորն ուղղված է դեպի յերկրագործության կապիտալիստական տարրերի վոչնչացումը: Մենք կողմնակից ենք այս յերկրորդ ճանապարհին:

Հետևապես հարցն այսպես է դրված՝ կամ մեկ ճանապարհը, կամ՝ մյուսը, կամ հետ—դեպի կապիտալիզմ, կամ՝ առաջ—դեպի սոցիալիզմ: Ուրիշ վո՞չ մի յերրորդ ճանապարհ չկա և չի՞ ել կարող լինել: «Հավասարակշռության» թեորիան յերրորդ ճանապարհը նշելու մի փորձ է: Յեվ հենց այն պատճառով, վոր նա նկատի յե առնում այդ յերրորդ (գոյություն չունեցող) ճանապարհը, —նա դառնում է ուտոպիկ և հակամարքսիստական:

Այսպես, ահա, բավական եր միայն հակադրել Մարքսի վերարտադրության թեորիան սեկտորների «հավասարակշռության» թեորիային, վորպեսզի այս վերջինիցն այլևս հետք անգամ չմնա:

Ի՞նչն է պատճառը, ապա, վոր այս բանը չի կատարվում մեր մարքսիստ-ազդարարագետների կողմից: Ո՞ւմ է հարկավոր, վոր «հավասարակշռության» ծիծաղաշարժ թեորիան գոյություն չունենա մեր մամուլում, իսկ վերարտադրության մարքսիստական թեորիան մնա պահված:

II. «ԻՆՔՆԱՀՈՍԻ» ԹԵՈՐԻԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ- ԹՅԱՆ ՄԵՋ

Անցնենք այժմ քաղաքատնտեսության մեջ յեղած յերկրորդ նախապաշարմունքին, բուրժուական տիպի յերկրորդ թեորիային: Յես նկատի ունեմ «Ինքնահոսի» թեորիան սոցիալիստական շինարարության մեջ. մի թեորիա, վոր վոչ մի առնչություն չունի մարքսիզմի հետ, բայց ամենայն ջանասիրությամբ քարոզվում է աջ բանակի մեր ընկերների կողմից: Այդ թեորիայի հեղինակները պնդում են մոտավորապես հետևյալը: Կար մեզանում կապիտալիզմ, զարգանում էր ինդուստրիան կապիտալիստական բաղադրի վրա, իսկ գյուղը հետևում էր կապիտալիստական քաղաքին տարերայնորեն, ինքնահոսի ձևով, կերպարանափոխվելով կապիտալիստական քաղաքի նմանությամբ: Յեթե այսպես էր կատարվում կապիտալիզմի ոլով, ապա ինչո՞ւ նույնը չի կարող կատարվել նաև խորհրդային տնտեսության ոլով, ինչո՞ւ չի կարող գյուղը, մանր-գյուղացիական տնտեսությունն ինքնահոսի ճանապարհով հետևել սոցիալիստական քաղաքին, տարերայնորեն կերպարանափոխվելով սոցիալիստական քաղաքի նմանությամբ: Այդ թեորիայի հեղինակներն այս հիման վրա պնդում են, վոր գյուղը կարող է հետևել սոցիալիստական քաղաքին ինքնահոսի կարգով: Այստեղից ել հարց է ծագում. — արժե՞ արդյոք, վոր մենք այդքան տաքանանք խորհրդատնտեսություններ և կոլտնտեսություններ ստեղծելու համար, արժե՞ արդյոք, վոր մենք նիզակներ կտրենք, յեթե գյուղն առանց դրան ել կարող է հետևել սոցիալիստական քաղաքին:

Ահա ձեզ ես մեկ թեորիա, վորն որչեղտվորեն նպատակ ունի նոր գեներ տալու գյուղի կապիտալիստական տարրերի ձեռքը կոլտնտեսությունների դեմ մղած նրանց պայքարում: Այս թեորիայի հակամարտիստական ելությունը կատկածից դուրս է:

Տարրինակ չե՞մ միթե, վոր մեր տեսաբանները դեռևս ժամանակ չեն գտել մեր պրակտիկ-կոլխոզնիկների մտքերը պղտորող այդ թեորիան փետրահան անելու և մերկացնելու համար:

Կասե՞լի, վոր սոցիալիստական քաղաքի առաջնորդող դերը մանր-գյուղացիական գյուղի նկատմամբ խոշոր է և անբաժանատելի: Հենց դրա վրա ել հիմնվում է ինդուստրիայի վերակառուցող գերը գյուղատնտեսության վերաբերմամբ: Սակայն բավա-

կա՞ն է արդյոք այս ֆակտորը, վորպեսզի մանր-գյուղացիական գյուղը հենց ինքնաբերաբար հետևի քաղաքին սոցիալիստական շինարարության ասպարեղում: Վո՞չ, բավական չէ: Կապիտալիզմի ոլով գյուղը տարերայնորեն հետևում էր քաղաքին, վորովհետև քաղաքի կապիտալիստական տնտեսությունը և գյուղացու մանր-ապրանքային տնտեսությունն իրենց հիմունքով նույնատիպ տնտեսություններ են: Իհարկե, մանր-գյուղացիական ապրանքային տնտեսությունը դեռևս կապիտալիստական տնտեսություն չէ: Սակայն իր հիմքով նա նույնատիպ է կապիտալիստական տնտեսությանը, վորովհետև հենվում է արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա: Լենինը հազար անգամ իրավացի չի, յերբ իր դիտողություններում ընկ. Բուխարինի «Փոխանցման շրջանի եկոնոմիկան» գրքի առթիվ խոսում է «գյուղացիության ապրանքա-կապիտալիստական տեղեկնի» մասին, վորպես «հակադրություն պրոլետարիատի սոցիալիստական տեղեկնի»^{*)}, հատկապես դրանով է բացատրվում, վոր «մանր արտադրությունն առաջացնում է կապիտալիզմ և բուրժուազիա՝ մշտապես, ամեն սր և ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական մասշտաբով» (Լենին): Կարելի՞ չէ արդյոք ասել, հետևապես, վոր գյուղացիական մանր ապրանքային տնտեսությունը հիմնականում նույնատիպ տնտեսություն է քաղաքի սոցիալիստական արտադրության համեմատությամբ: Ալիներ և, վոր այդպես չի կարելի առել առանց հրաժարվելու մարքսիզմից: Այլապես Լենինը չէր ասի, թե «քանի դեռ մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկրում, կապիտալիզմի համար Ռուսաստանում ավելի հաստատուն տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար»: Նշանակում է ինքնահոսի թեորիան սոցիալիստական շինարարության մեջ հակամարտիստական թեորիա չէ: Նշանակում է. վորպեսզի մանր-գյուղացիական գյուղը դնա սոցիալիստական քաղաքի հետևից, անհրաժեշտ է դեռ, անկախ ամեն բանից, գյուղում արմատացնել խոշոր սոցիալիստական տնտեսություններ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ձևով, վորպես սոցիալիզմի բազա, վորոնք ի վիճակի կլինեն իրենց հետևից տանել գյուղացիության հիմնական մասսաները սոցիալիստական քաղաքի առաջնորդությանը:

Խնդիրը պարզ է: «Ինքնահոսի» թեորիան սոցիալիստական

^{*)} Ընդգծումը Լենինին և. Ի. Ստ.:

չինարարության մեջ հակամարքսիստական մի թեորիա յե: Սոցիալիստական քաղաքն իր հետևից պիտի տանի մանր-գյուղացիական գյուղը՝ գյուղում արմատացնելով կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ և գյուղը վերակառուցելով սոցիալիստական նոր ձևով:

Տարրերնակ ե, վոր սոցիալիստական չինարարության մեջ «ինքնահոսի» հակամարքսիստական թեորիան մինչև այժմ պատշաճ հակահարված չի ստանում մեր տեսարան-ազդարարագետների կողմից:

III. ՄԱՆՐ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Անցնենք քաղաքատնտեսության մեջ յեղած յերրորդ նախապաշարմանը՝ մանր-գյուղացիական տնտեսության «կայունության» թեորիային: Բոլորին հայտնի յեն բուրժուական քաղաքատնտեսության առարկությունները մարքսիզմի հայտնի թեզիսի դեմ՝ խոշոր տնտեսության առավելությունների մասին մանրի նկատմամբ, վորն իբր թե ուժ ունի միայն արդյունաբերության մեջ, սակայն չի կարող կիրառվել գյուղատնտեսության ասպարեցում: Այդ տեսությունը քարոզող Դավիդի և Հերցի տիպի սոցիալ-դեմոկրատական տեսարանները փորձում եյին այդ դեպքում «հենվել» այն փաստի վրա, թե իբր մանր գյուղացին դիմացկուն ե, համբերատար և պատրաստ ե ամեն վրկանք կրելու, միայն թե կարողանա պաշտպանել իր հողի կտորը, վոր այդ պատճառով յերկրագործության մեջ խոշոր տնտեսության դեմ պայքարելիս մանր-գյուղացիական տնտեսությունը կայունություն ե հայտաբերում: Դժվար չե հասկանալ, վոր այդպիսի «կայունությունը» վատ ե ամեն տեսակ անկայունությունից: Դժվար չե հասկանալ, վոր հակամարքսիստական այս տեսությունը մեկ նպատակ միայն ունի՝ ջատագովել և ամրապնդել կապիտալիստական կարգերը: Յեվ հենց այն պատճառով, վոր նա այդպիսի նպատակ ունի, ժարքսիստներին հաջողվեց այնպիսի հեշտությամբ ջախջախել այդ տեսությունը: Սակայն խնդիրն այժմ այդ չե: Խնդիրն այն ե, վոր մեր գործնականն ու մեր իրականությունը նորանոր արգումենտներ են տալիս այդ տեսության դեմ, իսկ մեր տեսաբանները տարրերնակ կերպով չեն ցանկանում կամ չեն կարողանում «գտագործել» այդ նոր զենքն ընդդեմ բանվոր դասակարգի թըչ-

ծամիների: Յես նկատի ունեմ հողի մասնավոր սեփականատիրության վոչնչացման պրակտիկան, հողի ազգայնացման պրակտիկան մեզանում, վորն ազատագրում ե մանր գյուղացուն իր փոքրիկ հողամասին ստրկորեն կառչելուց և դրանով իսկ դուրացնում ե մանր-գյուղացիական տնտեսության փոխանցումը խոշոր, կոլեկտիվ տնտեսության:

Յեվ իրոք, ի՞նչն եր կապում, կապում ե և պետք ե կապի Արևմտյան Յեվրոպայում մանր գյուղացուն իր մանր ապրանքային տնտեսությանը: Նախ և առաջ և զլիսավորաբար՝ իր սեփական հողամասը, հողի մասնավոր սեփականատիրությունը: Նա տարիներով փող ե կուտակել, վորպեսզի մի կտոր հող գնի, գնել ե, և հասկանալի յե, վոր չի ցանկանում բաժանվել նրանից, նախընտրելով կրել ամեն տեսակի դրկանքներ, գերադասելով վաճառելու իր իրավունքը հասնել, միայն թե պաշտպանել իր հողամասը՝ իր անհատական տնտեսության հիմքը: Կարելի՞ յե ասել արդյոք, վոր այդ ֆակտորը նույն ձևով շարունակում ե դործել նաև մեզանում, խորհրդային կարգերի պայմաններում: Վո՛չ, չի կարելի ասել: Ձի կարելի ասել, վորովհետե մեզանում չկա հողի մասնավոր սեփականատիրություն: Յեվ հենց այն պատճառով, վոր մեզ մոտ հողի մասնավոր սեփականատիրություն չկա, չկա նաև գյուղացու ստրկական այն կապվածությունը հողին, վոր գյուղություն ունի Արևմուտքում: Յեվ այդ հանգամանքը չի կարող չթեթևացնել մանր-գյուղացիական տնտեսության փոխանցումը կոլեկտիվ տնտեսությունների ուսերի վրա:

Ահա թե վորն ե պատճառներից մեկն այն բանի, վոր գյուղի խոշոր տնտեսություններին՝ կոլեկտիվ տնտեսություններին՝ հաջողվում ե այնպես հեշտությամբ մեզանում հողի ազգայնացման պայմաններում ցուցադրել իր առավելությունները մանր-գյուղացիական տնտեսության հանդեպ:

Ահա թե ինչու՞ն ե խորհրդային հողային որենքների հեղափոխական մեծ նշանակությունը, վորոնք վոչնչացրել են բացարձակ ունտան, վերացրել են հողի մասնավոր սեփականատիրությունը և սահմանել հողի ազգայնացում:

Սակայն սրանից հետևում ե, վոր մենք մեր տրամադրության տակ նոր արգումենտ ունենք ընդդեմ բուրժուական տնտեսագետների, վորոնք հուշակում են մանր-գյուղացիական տնտեսության կայունությունը՝ խոշոր տնտեսության դեմ նրա մղած պայքարում:

Իսկ ինչո՞ւ այս նոր արդումները բավարար չափով չեն ոգտագործում մեր տեսարան-ազդարարները բուրժուական աշխատեցողի և բոլոր տեսությունների դեմ մղած պայքարում:

Հողի ազդանյացում՝ կատարելով՝ մենք ի միջի այլոց յեկեղեցի ունեցինք տեսական այն նախադրյալները, վոր տրված են «Կապիտալի» յերրորդ հատորում, Մարքսի «Հավելյալ արժեքի թեորիան» հոշակավոր գրքի մեջ և Լենինի ազդարարին աշխատություններում, վորոնք տեսական մտքի մեծահարուստ մի գանձարան են: Յես նկատի ունեմ հողային ունտայի տեսությունը ընդհանրապես և հողային բացարձակ ունտայի տեսությունը մասնավորապես: Այժմ բոլորի համար ել պարզ է, վոր այդ աշխատությունների տեսական դրույթները փայլուն կերպով հաստատվեցին սոցիալիստական շինարարության մեր պրակտիկայով թե՛ քաղաքում և թե՛ դուրսում:

Միայն անհասկանալի չէ, թե ինչու Չայանովի տիպի «խորհրդային տնտեսագետների հակագիտական տեսությունները պետք է ազատ մուտք ունենան մեր մամուլում, իսկ Մարքսի-Ենգելսի—Լենինի հանճարեղ աշխատությունները հողային ունտայի և հողային բացարձակ ունտայի տեսության մասին չպետք է ժողովրդականացվեն և առաջին տեղը գրավեն, այլ մեան անհայտ:

Դուք թերևս հիշում եք Ենգելսի հայտնի բրոշյուրը «Դյուզդա-ցիական խնդրի մասին»: Դուք հիշում եք, իհարկե, թե վորպիսի զգուշությամբ է մոտենում Ենգելսը մանր դյուզդացիներին ապրանքային տնտեսության ճանապարհից կոլեկտիվ տնտեսության ուղիները փոխադրելու խնդրին: Թույլ տվեք մեջբերելու Ենգելսի այդ բրոշյուրի համապատասխան տողերը:

«Մենք վճռականապես կանդնած ենք մանր դյուզդացիության կողմը: Մենք մեն հնարավոր բան պետք է անենք, վորպեսզի նրա համար կյանքը առանձին լինի, վորպեսզի թեթևացնենք նրա փոխանցումն ընկերությունների մեջ այն դեպքում, յեթե նա կվճռի այդպես անել: Իսկ այն դեպքում, յեթե նա ի վիճակի չլինի այդ վորոշումը կայացնելու, մենք կաշխատենք նրան հնարավորությամբ չափ շատ ժամանակ տալ՝ մտածելու այդ մասին իր հազախտքի վրա»^{*)}:

Դուք տեսնում եք, թե ինչպիսի զգուշությամբ է մոտենում Ենգելսն անհատական դյուզդացիական տնտեսությունները կոլեկտիվիզմի ուղիների վրա փոխադրելու խնդրին: Ինչո՞ւ բացատրե՞

*) Ինգլիզերեն խմբ. է: Ի. Ստ.:

առաջին հայացքից Ենգելսի չափազանցված այդ շրջահայեցողությունը: Ի՞նչ յեկեղեցի ունեմ նա այդ դեպքում: Ահներև է, վոր նա յեկեղեցի էր հողի մասնավոր սեփականատիրության դոյությունից, այն փաստից, վոր դյուզդացին ունի հողի «մի կտոր», վորից դյուզդացու համար դժվար կլինի հրաժարվել: Այդպիսին է Արևմուտքի դյուզդացիությունը: Այդպիսին է դյուզդացիությունը կապիտալիստական յերկրներում, վորտեղ դոյություն ունի հողի մասնավոր սեփականատիրություն: Հասկանալի չէ, վոր այստեղ մեծ շրջահայեցողություն է պետք: Կարելի՞ չէ արդյոք ասել, վոր մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում նույն դրությունն է տիրում: Վոչ, այդպես չի կարելի ասել: Չի կարելի, վորովհետև մեզանում չկա հողի մասնավոր սեփականատիրություն, վորը դյուզդացուն մեխում է իր անհատական տնտեսությանը: Չի կարելի, վորովհետև մեզ մոտ հողն ազդանյացված է, իսկ այդ հանգամանքը թեթևացնում է անհատ դյուզդացու փոխանցումը կոլեկտիվիզմի ուղիների վրա:

Ահա թե վորտեղ է այն համեմատաբար դյուզդին և արագ զարգացման պատճառներից մեկը, վոր ունի վերջերս կոլտնտեսական շարժումը մեզանում:

Ցավալի չէ, վոր մեր տեսարան-ազդարարները չեն փորձել դեռևս պատշաճ պարզությամբ լույս աշխարհ հանել այն տարբերությունը, վոր դոյություն ունի մեր և Արևմուտքի դյուզդացիության միջև: Մինչդեռ այդպիսի աշխատանքը հակայական նշանակություն կունենար վոչ միայն մեզ, խորհրդային աշխատավորներին, այլև ամբողջ աշխարհի կոմունիստների համար: Վորովհետև կապիտալիստական յերկրների պրոլետարական հեղափոխության համար բոլորովին նույնը չէ, թե կարիք կլինի՝ այստեղ սոցիալիզմը կառուցել առաջին իսկ օրից, յերբ պրոլետարիատն իր ձեռքը կվերցնի իշխանությունը՝ հողի ազդանյացման բազայի հիման վրա, թե՞ առանց այդ բազայի:

Իմ վերջին յելույթներից մեկում, մամուլի մեջ («Մեծ բեկման տարին» հոդվածում) յես զարգացրի յերկրագործական խոչոր տնտեսության առավելությունների հայտնի արդումները մանր տնտեսության հանդեպ, նկատի ունենալով խոչոր խորհրդային տնտեսությունները: Կարիք չկա ապացուցելու, վոր բոլոր այդ արդումները յիովին և ամբողջովին վերաբերում են նաև կոլեկտիվ տնտեսություններին, վորպես տնտեսական խոչոր

միավորներին: Յես խոսում եմ վոչ միայն դարգացման և մեքենատրակտորային բազա ունեցող կոլտնտեսությունների, այլև նախնական կոլտնտեսությունների մասին, վորոնք գտնվում են կոլտնտեսական շարժման այսպես ասած՝ մանուֆակտուրային շրջանում և հենվում են գյուղացիական ինվենտարի վրա: Յես նկատի ունեմ նախնական այն կոլտնտեսությունները, վորոնք հիմնվում են այժմ համատարած կոլեկտիվացման շրջաններում և վորոնք պարզապես հենվում են գյուղացիական արտադրական միջոցների հասարակ գումարման վրա: Վերցնենք, որինակ, նախկին Դոնի մարզի խոպրի շրջանի կոլտնտեսությունները: Արտաքուստ այդ կոլտնտեսությունները կարծես թե իրենց տեխնիկայով չեն տարբերվում մանր-գյուղացիական տնտեսություններից (քիչ են մեքենաները և տրակտորները): Մինչդեռ գյուղացիական գործիքների պարզ գումարումը կոլտնտեսությունների ներսում այնպիսի եֆեկտ տվեց, վորի մասին չեն ել յերազեմեր պրակտիկ աշխատավորները: Ինչո՞վ արտահայտվեց այդ եֆեկտը: Նրանով, վոր կոլտնտեսությունների ռեսուրսին անցնելը ընդարձակեց ցանքային տարածությունը 30, 40 և 50 տոկոսով: Ինչո՞վ բացատրել «գլխավորում» այդ եֆեկտը: Նրանով, վոր գյուղացիներն՝ անդոր լինելով անհատական աշխատանքի պայմաններում, այսօր հսկայական մի ուժ են դարձել, միացնելով իրենց գործիքները և համախմբվելով կոլտնտեսությունների մեջ: Նրանով, վոր գյուղացիները հնարավորություն են ստացել մշակելու անհատական աշխատանքով դժվարությամբ մշակվող և անմշակ հողերը: Նրանով, վոր գյուղացիները հնարավորություն են ստացել իրենց ձեռքը վերցնելու անմշակ հողերը: Նրանով, վոր հնարավորություն են ստացվել ոգտագործելու պարագտարածությունները, առանձին հողամասերը, միջնակները և այլն:

Ոգտագործվող անմշակ հողերի մշակման խնդիրը հսկայական նշանակություն ունի մեր գյուղատնտեսության համար: Դուք գիտեք, վոր Ռուսաստանում հին ժամանակները հեղափոխական շարժման առանցքն եր կադմում ագրարային խնդիրը: Դուք գիտեք, վոր ագրարային շարժման նպատակներից մեկն եր վերացնել հողասակավությունը: Շատերն այն ժամանակ կարծում եյին, թե հողասակավությունը մի բացարձակ յերեույթ ե, այսինքն՝ այլևս մշակության համար պիտանի աղատ հողեր չկան: Իսկ ի՞նչ պարզվեց իրականությունից մեջ: Այժմ բոլորի համար եր

պարզ ե, վոր ԽՍՀՄ-ում տասնյակ-միլիոնավոր հեկտարներով աղատ հողեր կային: Սակայն իրենց խղճուկ գործիքներով գյուղացիք վոչ մի հնարավորություն չունեյին մշակելու իրենց այդ հողերը: Յեվ հենց այն պատճառով, վոր գյուղացին հնարավորություն չուներ մշակելու անմշակ և լքված հողերը, հատկապես այդ պատճառով նա ձգտում եր դեպի «փափուկ հողերը», այն հողերը, վորոնք պատկանում եյին կալվածատերերին, և այն հողերը, վորոնք հարմար են գյուղացիական ինվենտարի ուժով մշակելու համար՝ անհատական աշխատանքի պայմաններում: Ահա թե ինչն եր «հողասակավություն» հիմքը: Զարմանալի չե այդ պատճառով, վոր մեր Զերնոտրեստն այժմ հնարավորություն ունի ոգտագործելու մոտ քսան միլիոն հեկտար աղատ հող, վորը չեյին գրավել գյուղացիները, և վորոնք չեյին կարող մշակվել անհատական աշխատանքով, մանր-գյուղացիական ինվենտարի ուժով:

Կոլտնտեսային շարժման նշանակությունը նրա բոլոր փուլերում՝ և՛ նախնական փուլում, և՛ առավել դարգացած փուլում, յերբ նա զինված ե տրակտորներով, այն ե, վոր գյուղացիներն այժմ հնարավորություն են ստանում ոգտագործելու լքված և անմշակ հողերը: Սրանումն ե ցանքերի տարածության հսկայական չափերով ընդարձակվելու գաղտնիքը՝ գյուղացիների կոլեկտիվ աշխատանքի անցնելու պայմաններում: Սրանումն ե կոլտնտեսությունների առավելության հիմունքներից մեկը՝ անհատական գյուղացիական տնտեսությունների հանդեպ:

Կարիք ել չկա ասելու, վոր կոլտնտեսությունների առավելությունն անհատական գյուղացիական տնտեսությունների հանդեպ ավելի անվիճելի կղառնա, յերբ համատարած կոլեկտիվացման շրջանում նախնական կոլտնտեսություններին ոգնության կհասնեն մեր մեքենա-տրակտորային կայանները և խմբերը, յերբ իրենք, կոլտնտեսությունները հնարավորություն կստանան իրենց ձեռքին կենտրոնացնելու տրակտորներն ու կոմբայնները:

IV. ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԸ

Գոյություն ունի բուրժուական տնտեսագետների կողմից հրահրվող մի նախապաշարմունք այսպես կոչված՝ «մկրատի» մասին, վորին պետք ե անողոք կոիվ հայտարարել, ինչպես և բոլոր այլ բուրժուական տնտեսություններին, վորոնք դժբախտաբար տարածվել են խորհրդային մամուլի մեջ: Յես նկատի ունեմ

այն տեսութիւնը, վորն ասում ե, թե իբր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը գյուղացիութեանն ավելի քիչ բան ե տվել, քան Փետրվարյան հեղափոխութիւնը, թե իբր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը փաստորեն վոչինչ չի տվել գյուղացիներին: Այս նախապաշարմունքը մի ժամանակ հրահրում եր մեր մամուլում «խորհրդային» տնտեսագետներէջ մեկը: Ծիշտ ե, «խորհրդային» այդ տնտեսագետը հետագայում հրաժարվեց իր տեսութիւնից...

(Մի ձայն. «Իսկ ո՞վ ե դա»: Դա Գրոմանն ե: Բայց այդ թեո-րեան յուրացրեց տրոցկիստ-դինովսեվական ուղղիցիան ե ողտա-գործեց կուսակցութեան դեմ: Վոչ մի հիմք չկա պնդելու, վոր այդ տեսութիւնը տեղ չունի ներկայումս ել «խորհրդային» հասա-րակայնութեան շրջանում: Դա չափազանց կարեւոր մի խնդիր ե, ընկերներ: Նա շոշափում ե քաղաքի ե գյուղի փոխհարա-բերութիւններէ պրոբլեմը, շոշափում ե քաղաքի ե գյուղի մեջ յեղած հակադրութեան վոչնչացման պրոբլեմը: Նա շոշափում ե «մկրատի» ամենաակտուալ հարցը: Յեւլ այդ պատճառով կար-ծում եմ, վոր արժե դրադվել այդ տարրորինակ տեսութեամբ:

Ծի՞շտ ե արդո՞ք, վոր գյուղացիները վոչինչ չեն ստացել Հոկտեմբերյան հեղափոխութիւնից: Դիմենք փաստերին:

Յեւ ձեռքի տակ ունեմ հայտնի վիճակագիր ընկ. Նեմչինովի հայտնի աղյուսակը, վոր հրատարակվել ե «Հացի Փրոնտում» իմ հոգվածի մեջ: Այդ աղյուսակից յերևում ե, վոր նախահեղափո-խական շրջանում կալվածատերերն «արտադրում եյին» վոչ պա-կաս, քան 600 միլիոն փութ հացահատիկ: Նշանակում ե, վոր այն ժամանակ կալվածատերերը 600 միլիոն փութ հացահատիկի տեր եյին: Կուլակներն այն ժամանակ «արտադրում եյին» 1900 միլիոն փութ հացահատիկ: Այդ չափազանց մեծ մի ուժ ե, վոր ունեյին կուլակները: Իսկ չֆալորներն ու միջակներն արտադրում եյին 2500 միլիոն փութ հացահատիկ: Այս ե ահա հին, նախա-հոկտեմբերյան շրջանի գյուղի պատկերը:

Ի՞նչ փոփոխութիւններ առաջացան գյուղում Հոկտեմբերից հետո: Յեւ վերցնում եմ նույն աղյուսակի թվերը: Վերցնենք, որինակ, 1927 թիվը: Այդ տարում վո՞րքան եյին արտադրել կալվածատերերը: Պարզ ե, վոր նրանք վոչինչ չեյին արտադրել ե չեյին ել կարող արտադրել, վորովհետեւ կալվածատերերին վո-չընչացրել եր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը: Դուք կհաս-կանաք, վոր դա պետք ե մի խոշոր թեթեւացում հանդիսանար

գյուղացիութեան համար, վորովհետեւ գյուղացիութեանն աղտա-վեց կալվածատերերի լծից: Այդ, իհարկե, մի մեծ շահում ե գյուղացիութեան համար, վոր նա ստացալ Հոկտեմբերյան հեղա-փոխութեան հետեանքով: Ինչքա՞ն եյին արտադրում կուլակները 1927 թիվին: 600 միլիոն փութ հացահատիկ 1900 միլիոն փութ փո-խարեն: Դուրս ե դալիս, վոր կուլակները Հոկտեմբերյան հեղա-խութեանից հետո յեկող շրջանում թուլացել են ավելի քան 3 փոխութիւնից հետո յեկող շրջանում թուլացել են ավելի քան 3 անգամ: Դուք կհասկանաք, վոր այդ հանգամանքը չեր կարող անգամ: Դուք կհասկանաք, վոր միջակները գրութիւնը: Իսկ չթեթեացնել չքավորութեան ե միջակները չֆալորներն ու միջակները 1927 թիվին: վո՞րքան են արտադրել չֆալորներն ու միջակները 1927 թիվին: 4 միլիարդ փութ՝ 2500 միլիոն փութ փոխարեն: Դուրս ե դալիս, վոր չքավորներն ու միջակները Հոկտեմբերյան հեղափոխութիւ-նից հետո 1,5 միլիարդ փութ հացահատիկ ավելի յեն արտա-դրել, քան նախահեղափոխական շրջանում:

Ահա ձեզ փաստեր, վորոնք վկայում են, վոր չքավորներն ու միջակները հսկայական շահ ստացան Հոկտեմբերյան հեղափո-խութեանից:

Ահա թե ինչ ավեց Հոկտեմբերյան հեղափոխութիւնը չքա-վորներին:

Ի՞նչպէս կարելի յե սրանից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխութիւնը վոչինչ չտվեց գյուղացիներին:

Բայց սա դեռ բոլորը չե, ընկերներ: Հոկտեմբերյան հեղա-փոխութիւնը վոչնչացրեց հողի մասնավոր սեփականատիրու-թիւնը, վոչնչացրեց հողի առուծախը ե հողն աղքատացրեց: Այս թիւնը, վոչնչացրեց հողի առուծախը ե հողն աղքատացրեց: Այս թիւնը ե նշանակում: Այս նշանակում ե, վոր գյուղացին հացահա-տիկ արտադրելու համար բնաւ կարիք չի դրում հող գնելու: Ա-ռաջ նա տարիներով միջոցներ եր կուտակում, վորպեսզի հող գնի, պարտքերի մեջ եր ընկնում, ստրկութեան եր դնում, միայն թե հող ձեռք բերեր: Հողի գնման ծախսերն, իհարկե, ընկնում եյին հացի արտադրութեան արժեքի վրա: Այժմ գյուղացին դրա կարիքը չի դրում: Այժմ նա կարող ե հաց արտադրել հող չգնե-լով: Ի՞նչ ե, սա թեթեւացում ե գյուղացիների գրութիւնը, թե չի թեթեւացում: Պարզ ե, վոր թեթեւացում ե:

Այնուհետեւ: Մինչեւ վերջերս գյուղացին հարկադրված եր հողը քչիորել անհատական աշխատանքով, իր հին ինվենտարով: Բոլորը դիտեն, վոր անհատական աշխատանքը՝ զինված հին, այժմ արդեն անպետք արտադրական գործիքներով, չի տալիս

այն ողուտը, վոր անհրաժեշտ է տանելի կերպով ապրելու, իր նյութական դրուժյունը սխտեմատիկորեն բարձրացնելու, իր կուլտուրան զարգացնելու և սոցիալիստական շինարարության լայն ճանապարհը դուրս դալու համար: Այժմ, կուլտնտեսային շարժման խիստ զարգացման հետևանքով, գյուղացիք հնարավորություն ունեն միացնելու իրենց աշխատանքը դրացիների աշխատանքին, միավորվելու կուլտնտեսությունների մեջ, ոգտագործելու անմշակ և լքված հողերը, մեքենաներ և տրակտորներ ստանալու և աղավիսով բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողականությունը կրկնակի, յեթե վոչ յեռակի չափով: Իսկ ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, վոր գյուղացին հնարավորություն ունի կուլտնտեսության մեջ միավորվելու շնորհիվ շատ ավելի արտադրել, քան առաջ՝ նույնչափ աշխատանք թափելով: Այս նշանակում է, հետևաբար, վոր հացահատիկի արտադրությունը կարող է ավելի եժան կատարվել, քան մինչև վերջերս եր: Այս նշանակում է, վերջապես, վոր դների կայունության ղեկավար գյուղացին կարող է ավելի շատ հացահատիկ ստանալ, քան ստանում եր մինչև այժմ:

Ինչպե՞ս կարելի յե այս բոլորից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն ոգուտ չտվեց գյուղացիությանը:

Մի՞թե պարզ չե, վոր այդպիսի անհեթեթություն ասող մարդիկ բացարձակապես ստում են կուսակցության և խորհրդային իշխանության հասցեյին:

Սակայն ի՞նչ է հետևում այս բոլորից:

Սրանից հետևում է, վոր «մկրատի» խնդիրը, «մկրատի» վերացման խնդիրը պետք է այժմ դրվի նոր ձևով: Սրանից հետևում է, վոր յեթե կուլտնտեսային շարժումն աճի ներկայիս տեմպով, «մկրատը» հենց մոտ ժամանակներս կվերանա: Սրանից հետևում է, վոր քաղաքի և գյուղի հարաբերությունների խնդիրը դրվում է նոր հողի վրա, վոր քաղաքի և գյուղի հակադրությունը կվերացվի արագացված տեմպով:

Այս հանգամանքն, ընկերներ, հսկայական նշանակութուն ունի մեր ամբողջ շինարարության համար: Դա կերպարանափոխում է գյուղացիության հոգեբանությունը և դարձնում նրա յերեսը դեպի քաղաք: Դա հող է ստեղծում քաղաքի և գյուղի միջև յեղած հակասությունը վոչնչացնելու համար: Դա հող է ստեղծում, վորպեսզի կուսակցության՝ «յերեններս դեպի գյուղ»

լոգունդը լրացվի կուլտնտեսական գյուղացիների «յերեններս դեպի քաղաք» լոգունդով: Յեվ սրանում վոչինչ չկա զարմանալի, վորովհետև գյուղացին այժմ քաղաքից ստանում է տրակտոր, գյուղատնտես, կաղմակերպիչ և, վերջապես, ուղղակի ոգնություն՝ կուլակներին հաղթահարելու համար մղած պայքարում: Հին տիպի գյուղացին իր գաղանային անլստահությամբ դեպի քաղաքը՝ վորպես կեղեքողի, հետին պլանն է մղվում: Նրան փոխաբերվում է նոր՝ կուլտնտեսական գյուղացին, վորը քաղաքի վրա նայում է այնտեղից ուսալ արտադրական ոգնություն ստանալու հուսալից աչքերով: Հին տիպի, չքավորության աստիճանի հասնելուց վախեցող և միայն վախվախելով կուլակի աստիճան բարձրացող գյուղացուն (կարող են ձայնադուրկ անել) փոխարինում է նոր գյուղացին, վորը կուլտնտեսություն մտնելու և չքավորությունից տնտեսական վերելքի լայն ճանապարհ դուրս դալու նոր հեռանկար ունի:

Ահա թե ինչպես է ընթանում գործը, ընկերներ:

Յեվ առավել ցավալին այն է, ընկերներ, վոր մեր տեսաբան-ազդարարները բոլոր միջոցները ձեռք չեն առել, վորպեսզի դիմակազերծ անեն և արմատից վերացնեն բոլոր և ամեն տեսակ բուրժուական այն տեսությունները, վորոնք նպատակ ունեն արժեքադուրկ անել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները և աճող կուլտնտեսարժույթը:

V. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՑԹԸ

Կուլտնտեսությունները, վորպես տնտեսության մի տիպ, սոցիալիստական շինարարության ձևերից մեկն են հանդիսանում: Դրանում վոչ մի կասկած չի կարող:

Հոնտորներից մեկը յելույթ ունեցավ այստեղ և պակասերը բերեց կուլտնտեսությունները: Նա հավատացնում եր, վոր կուլտնտեսությունները, վորպես տնտեսական կաղմակերպություն, ընդհանուր վոչինչ չունեն տնտեսության սոցիալիստական ձևի հետ: Յես պետք է հայտարարեմ, ընկերներ, վոր կուլտնտեսությունների աշխարհի բնութագրումը կատարելապես սխալ է: Կասկած չի կարող չինել, վոր այդ բնութագրին ընդհանուր վոչինչ չունի լենինիզմի հետ:

Ինչո՞վ է վորոշվում տնտեսության տիպը: Ակներև է, վոր արտադրական պրոցեսի մեջ մարդկանց ունեցած հարաբերու-

թյուններով: Ուրիշ ել ինչո՞վ կարելի չե վորոշել տնտեսության տիպը: Սակայն մի՞թե կոլտնտեսության մեջ կա մարդկանց մի դասակարգ, վորոնք արտադրական միջոցների սեփականատեր են, և մարդկանց մի այլ դասակարգ, վորոնք զբաղված են արտադրական այդ միջոցներից: Մի՞թե կոլտնտեսության մեջ գոյություն ունեն չահագործողների և չահագործվողների դասակարգեր: Մի՞թե կոլտնտեսությանը հողի արտադրական հիմնական գործիքների համայնացում չե, վորոնք պատկանում են նույն պետությանը: Ի՞նչ հիմք կա պնդելու, թե կոլտնտեսությունները, վորպես տնտեսության մի տիպ, սոցիալիստական տնտեսության ձևերից մեկը չեն հանդիսանում:

Իհարկե, կոլտնտեսություններում կան հակասություններ: Իհարկե, կոլտնտեսություններում կան ինդիվիդուալիստական և նույնիսկ կուլակային սովորությունների մնացորդներ, վորոնք դեռևս մի կողմ չեն նետվել և վորոնք, սակայն, անպայման պետք ե մի կողմ նետվեն ժամանակի ընթացքում՝ կոլտնտեսությունների ամրապնդման, նրանց մեքենայացման հետ գրգռությամբ: Սակայն մի՞թե կարելի չե բացասել, վոր կոլտնտեսությունները, ամբողջովին վերջաված՝ իրենց հակասություններով ու թերություններով, կոլտնտեսությունները, վորպես տնտեսական մի փաստ, — հիմնականում դուրսի դարգացման մի նոր ճանապարհ են, դուրսի սոցիալիստական դարգացման մի նոր ուղի՝ հակառակ կուլակային, կապիտալիստական դարգացման ճանապարհին: Մի՞թե կարելի չե ժխտել, վոր կոլտնտեսությունները (յես խոսում եմ կոլտնտեսությունների և վոչ թե կեղծ կոլտնտեսությունների մասին) մեր պայմաններում հանդիսանում են գյուղի սոցիալիստական շինարարության բաղան ու ղեկավար՝ աճելով այն կատարի ընդհարումների մեջ, վոր նրանք ունենում են կապիտալիստական տարրերի հետ:

Մի՞թե պարզ չե, վոր վորոշ ընկերների կատարած փորձերը՝ արժեքավորել անելու կոլտնտեսությունները և հայտարարելու նրանց տնտեսության բուրժուական մի ձև, զուրկ են վորևէ հիմքից:

1923 թվին մեղանում դեռևս մասսայական կոլտնտեսական շարժում չկար: Լենինն իր «կոոպերացիայի մասին» բրոշյուրում նկատի ուներ կոոպերացիայի բոլոր տեսակները՝ և՛ ստորին ձևերը (մատակարարող-սպառող), և՛ բարձր ձևերը (կոլտնտեսա-

կան ձևեր): Իսկ ի՞նչ ե ասել նա կոոպերացիայի և կոոպերատիվ ձևնարկությունների մասին: Ահա Լենինի «կոոպերացիայի մասին» բրոշյուրից մի ցիտատ.

«Մեր կարգերում կոոպերատիվ ձևնարկությունները տարբերվում են մասնավոր-կապիտալիստական ձևնարկություններից՝ վորպես կուլկտիվ ձևնարկություններ, բայց չեն տարբերվում սոցիալիստական ձևնարկություններից, յեթե նրանք հիմնված են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին պատկանող հողի և արտադրական միջոցների վրա»:

Կնշանակի՞ Լենինը կոոպերատիվ ձևնարկությունները նկատի ունի վոչ թե ինքնին, վորպես ձևնարկություններ, այլ մեր կարգերի կապակցությամբ, այն կապակցությամբ, վոր նրանք գործում են պետությանը պատկանող հողի վրա մի յերկրում, վորտեղ արտադրության միջոցները պատկանում են պետությանը, և քննելով դրանք այս կարգով, Լենինը պնդում ե, վոր կոոպերատիվ ձևնարկությունները չեն տարբերվում սոցիալիստական ձևնարկություններից:

Այսպես ե ասում Լենինը կոոպերատիվ ձևնարկությունների մասին ընդհանրապես:

Մի՞թե պարզ չե, վոր առավել իրավամբ մենք կարող նույն բանն ասել նաև մեր ներկա շրջանի կոլտնտեսությունների մասին:

Չենք դրանով ե ի միջի այլոց բացատրվում, վոր Լենինը «կոոպերացիայի պարզ աճումը» մեր պայմաններում համարում ե «սոցիալիզմի աճմանը նույնանիչ» յերևույթ:

Դուք տեսնում եք, վոր կոլտնտեսություններն արժեքից զրկելով, վերոհիշյալ հոետորը չափազանց կուլիտ սխալ կատարեց լենինիզմի դեմ:

Այդ սխալից բղխում ե նրա մի այլ սխալը՝ դասակարգային պայքարի մասին կոլտնտեսություններում: Հոետորն այնպես գունդ նկարագրեց դասակարգային պայքարը կոլտնտեսություններում, վոր կարելի չե կարծել, թե դասակարգային պայքարը կոլտնտեսություններում չի տալիքերվում կոլտնտեսություններից գուրս կատարվող դասակարգային պայքարից: Ավելին. կարելի չե կարծել, թե այդ պայքարն այնտեղ ավելի կատարի չե դառնում: Սակայն միայն հիշատակված հոետորը չե, վոր մեղավոր ե այդ գործում: Դասակարգային պայքարի մասին յեղած բարբառները, կոլտնտեսություններում յեղած դասակարգային պայքարի մասին ճշոցներն ու ծվծվոցը ներկայումս մեր բոլոր «ձախ»

աղմկարարների բնորոշ կողմն է: Այդ ծվծվոցի մեջ ավելի կոմիկականն այն հանդամանքն է, վոր այդ ճչացողները «տեսնում են» դասակարգային պայքար այնտեղ, վորտեղ չկա այդ պայքարը, կամ համարյա թե չկա, սակայն չեն տեսնում այդպիսին այնտեղ, վորտեղ նա գոյություն ունի և ամբողջ դուրս է դալիս:

Դասակարգային պայքարի տարրեր կա՞ն արդյոք կոլտնտեսություններում: Այո, կան: Կոլտնտեսություններում դասակարգային պայքարի տարրեր չլինել չեն կարող, յեթե այնտեղ դեռևս պահպանվում են ինդիվիդուալիստական և անգամ կուլակային հոգեբանություն մնացորդներ, յեթե այնտեղ դեռևս կա վորոշ անհավասարություն: Բայց կարելի՞ յե ասել արդյոք, վոր դասակարգային պայքարը կոլտնտեսություններում նույն նշանակություն ունի, ինչ կոլտնտեսություններից դուրս կատարվող դասակարգային պայքարը: Վո՞չ, չի կարելի: Մեր «ձախ» ֆրադյորներն սխալն են հենց նրանումն է, վոր նրանք չեն տեսնում այդ տարրերությունը: Ի՞նչ է նշանակում դասակարգային պայքար կոլտնտեսություններից դուրս՝ մինչև կոլտնտեսությունների կաղմակերպումը: Այդ նշանակում է պայքար կուլակի դեմ, վորը տիրապետում է արտադրական միջոցներին, գործիքներին և ստրկացնում չքավորներին արտադրական այդ միջոցների ոգնությունը: Այդ պայքարը վոչ թե կենաց, այլ մահու պայքար է: Իսկ ի՞նչ է նշանակում դասակարգային պայքար կոլտնտեսությունների բազայի հիման վրա: Այդ նշանակում է նախ և առաջ, վոր կուլակը ջախջախված է, զրկված է արտադրական միջոցներից: Այդ նշանակում է, յերկրորդ, վոր չքավորներն ու միջակները միավորվել են կոլտնտեսություններում՝ արտադրական հիմնական գործիքների և միջոցների համայնացման բազայի հիման վրա: Այդ նշանակում է, վերջապես, վոր խնդիրը կոլտնտեսության անդամների միջև յեղած պայքարի մասին է, վորոնցից վոմանք դեռևս չեն ազատագրվել ինդիվիդուալիստական, կուլակային հոգեբանության մնացորդներից և վորո՞՞նք են ոգտագործել կոլտնտեսություններում յեղած վորոշ անհավասարությունն իրենց ոգտին, իսկ վոմանք են ցանկանում են կոլտնտեսություններից դուրս վտարել այդ մնացորդները և այդ անհավասարությունը: Մի՞թե պարզ չե, վոր միայն կուլյերը չեն կարող տեսնել կոլտնտեսությունների բազայի հիման վրա

և կոլտնտեսություններից դուրս կատարվող դասակարգային պայքարների միջև յեղած տարրերությունը:

Սխալ կլինե՞ր կարծել, թե քանի վոր կան կոլտնտեսություններ, ապա ուրեմն կա այն ամբողջը, ինչ վոր անհրաժեշտ է սոցիալիզմի կառուցման համար: Առավել ևս սխալ կլինե՞ր կարծել, թե կոլտնտեսությունների անդամներն արդեն սոցիալիստներ են դարձել: Վոչ, կարիք կա դեռևս շատ աշխատանք կատարելու, վորպեսզի վերամշակենք կոլտնտեսական գյուղացուն, շտկենք նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունը և պատրաստենք նրանից սոցիալիստական հասարակության իսկական աշխատավոր: Իսկ այդ կկատարվի այնքան արագ, վորքան արագ մեքենայացվեն, վորքան արագ տրակտորացվեն մեր կոլտնտեսությունները: Սակայն այս հանդամանքը չնչին չափով իսկ չի նվազեցնում կոլտնտեսությունների ամենահսկայական նշանակությունը, վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման լծակներ: Կոլտնտեսությունների մեծադույն նշանակությունն են հենց այն է, վոր նրանք գյուղատնտեսության մեջ մեքենաներ և տրակտորներ կիրառելու հիմնական բազան են, վոր նրանք մի հիմնական բազա յեն՝ վերամշակելու համար գյուղացու հոգեբանությունը պրոլետարական սոցիալիզմի վոգով: Լենինն իրավացի յե, յերբ ասում է.

«Մանր յերկրագործի վերամշակման և նրա ամբողջ հոգեբանության ու սովորությունների վերափոխման գործը սերունդներ պահանջող գործ է: Լուծել այդ խնդիրը մանր յերկրագործի վերաբերմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա ամբողջ հոգեբանությունը, կարող է միայն նյութական բազան, տեխնիկան, տրակտորների և մեքենաների գործադրումը մասսայական մասշտաբով յերկրագործության մեջ, ելեկտրիֆիկացիան՝ մասսայական մասշտաբով»:

Ո՞վ կարող է բացասել, վոր կոլտնտեսությունները սոցիալիստական տնտեսության այն ձևն են, վորի միջոցով միայն բաղմամիլիոն մանր գյուղացիությունը կարող է հաղորդակից լինել մեքենաներին և տրակտորներին, վորպես տնտեսական վերելքի լծակների, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման լծակների:

Այս բոլորի մասին մոռացել են մեր «ձախ» ֆրադյորները: Այս մասին մոռացել է նաև մեր հոետորը:

VI. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՅԵՎ ՇՐՋԱԳԱՐՁ ԿՈՒ-
ՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Վերջապես՝ մի քանի խոսք ել դասակարգային բեկումների և սոցիալիզմի հարձակման մասին դյուղի կապիտալիստական տար-
րերի դեմ:

Վերջին տարում կատարած մեր աշխատանքի բնորոշ գիծն այն է, վոր մենք, վորպես կուսակցություն, վորպես խորհրդա-
յին իշխանություն, ա) ծավալել ենք հարձակումը բոլոր ֆրոնտներում ընդդեմ դյուղի կապիտալիստական տարրերի և բ) այդ հարձակումը տվել է և շարունակում է տալ, ինչպես հայտնի յե, չափազանց շոշափելի դրակամ հետեանքներ: Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր կուլակության կեղե-
քիչ տենդենցների սահմանափակման քաղաքականությունից մենք անցել ենք կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քա-
ղաքականության: Այս նշանակում է, վոր մենք կատարել ենք և շարունակում ենք կատարել մեր վողջ քաղաքականության վճռա-
կան շրջադարձերից մեկը:

Մինչև վերջերս կուսակցությունը կանգնած եր կուլակու-
թյան կեղեքիչ տենդենցների սահմանափակման դիրքում: Հայտ-
նի յե, վոր այդ քաղաքականությունը հայտարարված եր դեռևս VIII համագումարում: Այդ իսկ քաղաքականությունը կրկին ան-
գամ հուշակվեց նեպոլ մոցենլու ժամանակ՝ կուսակցության XI համագումարում: Բոլորի ուշադրության մեջ դեռ թարմ է լե-
նինի նամակը՝ ուղղված Պրեարրատենսկուն (1922 թ.), վորտեղ նա կրկին վերադառնում է հատկապես այդպիսի քաղաքականու-
թյուն վարելու անհրաժեշտության խնդրին: Այդ հաստատվեց, վերջապես, մեր կուսակցության XV համագումարի կողմից: Այդ քաղաքականությունն է, վոր մենք վարել ենք մինչև վերջերս:

Ճի՞շտ է յեղել արդյոք այդ քաղաքականությունը: Այո, ան-
կասկած ճիշտ է յեղել: Կարո՞ղ եյինք արդյոք մենք հինգ կամ յերեք տարի առաջ այդպիսի հարձակում սկսել կուլակության դեմ: Կարո՞ղ եյինք արդյոք մենք այն ժամանակ հուսալ, վոր այդպիսի հարձակումը հաջողություն կունենա: Վո՛չ, չեյինք կա-
րող: Դա ամենավտանգավոր ավանտյուրիզմը կլիներ: Դա հար-
ձակման ամենավտանգավոր մի խաղ կլիներ: Վորովհետև մենք

ամենայն հավանականությամբ անհաջողության կմատնվեյինք և դրանով կամրայնեյինք կուլակության դիրքերը: Ինչո՞ւ: Վորովհետև մեզանում դեռևս չկային այն հենակետերը դյու-
ղում՝ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների լայն ցանցի ձևով, վորոնց վրա կարելի լիներ հենվել կուլակության դեմ վճռական հարձակում կատարելիս: Վորովհետև մենք այն ժամա-
նակ հնարավորություն չունեյինք կուլակի կապիտալիստական արտադրու-
թյամբ՝ կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների ձևով:

1926—1927 թվերին դինովյեվ-տրոցկիստական ոպողցիան ուժգնորեն կուսակցության վղին եր փաթաթում կուլակության վրա անմիջական հարձակում կատարելու քաղաքականությունը: Կուսակցությունը վտանգավոր այդ ավանտյուրային չընդառաջեց, վորովհետև նա գիտեր, վոր լուրջ մարդիկ թույլ չեն տա իրենց հարձակման խաղ խաղալու: Կուլակության վրա հարձակվելը լուրջ գործ է. այդ գործը չի կարելի չիթթել կուլակության դեմ դեկլամացիա անելու հետ: Ձի կարելի չիթթել նաև կուլակու-
թյան հետ ճանկալելու քաղաքականության հետ, վոր ուժգնո-
րեն կուսակցության վղին եր փաթաթում դինովյեվ-տրոցկիստա-
կան ոպողցիան: Հարձակվել կուլակի վրա՝ նշանակում է տա-
պալել կուլակներին, վերացնել կուլակությունը վորպես դասա-
կարգ: Այդ նպատակներից դուրս կատարվող հարձակումը դեկ-
լամացիա յե, ճանկալող, դատարկաստություն և ամեն բան, ինչ վոր կամենաք, բայց վոչ իսկական բայլչեիկյան հարձակում: Հարձակվել կուլակության վրա՝ նշանակում է նախապատրաստ-
վել գործի և հարվածել կուլակությանը, այո, հարվածել նրան այնպես, վոր նա այլևս չկարողանա վոտքի կանդենլ: Այս է, վոր մեզ, բայլչեիկյան մոտ կոչվում է իսկական հարձակում: Կա-
րո՞ղ եյինք մենք արդյոք 5 կամ 3 տարի առաջ այդպիսի հար-
ձակում ձեռնարկել կուլակության դեմ, հույս ունենալով, վոր հաջողություն ձեռք կրերենք: Վո՛չ, չեյինք կարող:

Յե՛վ իրավ, կուլակը 1927 թվին արտադրել է ավելի քան 600 միլիոն փութ հացահատիկ և այդ գումարից արտադրողական փոխանակման կարգով արտահանել է 130 միլիոն փութ: Բավա-
կան լուրջ մի ուժ է այդ, վորն անկարելի յե հալիլ չառնել: Իսկ վո՞րքան են արտադրել այն ժամանակ մեր խորհրդային և կոլեկ-
տիվ տնտեսությունները, — մոտ 80 միլիոն փութ, վորից չուկա

յին հանել մոտ 35 միլիոն փութ (ապրանքային) հացահատիկ, ինքներդ դատեցեք, կարո՞ղ եյինք մենք արդյոք այն ժամանակ փոխարինել կուլակային արտադրությունը և կուլակի ապրանքային հացահատիկը մեր կուլեկտիվ և խորհրդային տնտեսությունների արտադրությամբ և ապրանքային հացահատիկով: Պարզ է, վոր չեյինք կարող: Ի՞նչ է նշանակում այս պայմաններում՝ վրձնական հարձակում ձեռնարկել կուլակուլթյան դեմ: Այս նշանակում է հաստատապես պարտվել, ուժեղացնել կուլակուլթյան դիրքերը և մնալ առանց հացի: Ահա թե ինչու մենք չեյինք կարող ձեռնարկել և չպետք է ձեռնարկեյինք այն ժամանակ հարձակման կուլակները դեմ՝ հակառակ գինովյեվ-տրոցկիստական ոպտզիցիայի շովանտյուրիստական դեկլամացիաների:

Իսկ ա՞յժմ: Ի՞նչ դրության մեջ է գործն այժմ: Այժմ մեզանում նյութական բավականաչափ բաղա կա՝ կուլակուլթյանը զարկելու, նրա ընդդիմադրությունը փչրելու, նրան վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու համար, ինչպես նաև նրա արտադրությունը կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների արտադրությամբ փոխարինելու համար: Հայտնի յե, վոր 1929 թվին հացի արտադրությունը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում կաղմում էր վոչ պակաս, քան 400 միլիոն փութ (200 միլիոն փթով պակաս հացի այն ընդհանուր արտադրանքից, վոր ունեցել են կուլակային տնտեսությունները 1927 թվին): Հայտնի յե այնուհետև, վոր 1929 թվին կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները տվել են 130 միլիոն փութ ապրանքային հաց (այսինքն՝ ավելի, քան կուլակը 1927 թվին): Հայտնի յե վերջապես, վոր 1930 թ. կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հացի ընդհանուր արտադրանքը կաղմելու յե վոչ պակաս, քան 900 միլիոն փութ (այսինքն՝ ավելի, քան կուլակի ընդհանուր արտադրանքը 1927 թվին), իսկ ապրանքային հաց նրանք կտան վոչ պակաս, քան 400 միլիոն փութ (այսինքն՝ անհամեմատ ավելի, քան կուլակը 1927 թվին):

Ահա թե ինչպես է այժմ դրությունը մեզ մոտ, ընկերներ:

Ահա թե ինչպիսի տեղափոխություն է տեղի ունեցել մեր յերկրի եկոնոմիկայում:

Ահա թե դասակարգային ուժերի ինչպիսի տեղափոխություն է տեղի ունեցել մեզ մոտ վերջին ժամանակներս:

Այժմ, ինչպես տեսնում եք, մեզանում նյութական բաղա կա

կուլակային արտադրությունը կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների արտադրությամբ փոխարինելու համար: Ահա թե ինչու մեր առաջխաղացումը կուլակ տարրերի դեմ ներկայումս անկասկածելի հաջողություն ունի: Ահա թե ինչպես պետք է հարձակվել կուլակի վրա, յեթե խոսենք իսկական հարձակման մասին և վոչ թե սահմանափակվենք սնամեջ դեկլամացիայով ընդդեմ կուլակուլթյան:

Ահա թե ինչու վերջին ժամանակներս մենք կուլակների չահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականությունից դիմել ենք կուլակուլթյունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականության:

Բայց, որինակ, ի՞նչ անել ապակուլակացման քաղաքականությունը, կարելի՞ յե արդյոք թույլ տալ այդպիսին համատարած կոլեկտիվացման ռայոններում, —հարց են տալիս զանազան կողմերից: Ծիծաղելի հարց: Ապակուլակացումն անթույլատրելի յեր, քանի դեռ մենք կանգնած եյինք կուլակները շահագործողական տենդենցները սահմանափակելու տեսակետի վրա, քանի մենք դեռ հնարավորություն չունեյինք վճռական հարձակման անցնելու կուլակների դեմ և քան դեռ մենք անկարող եյինք կուլակային արտադրությունը փոխարինել կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների արտադրությամբ: Այն ժամանակ ապակուլակացման անհանդուրժելիության քաղաքականությունն անհրաժեշտ էր և ճիշտ: Իսկ ա՞յժմ: Այժմ դրությունն այլ է, Այժմ մենք հնարավորություն ունենք վճռական հարձակման դիմելու կուլակության դեմ, ջախջախելու նրա ընդդիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկելու նրան վորպես դասակարգ և փոխարինելու նրա արտադրությունը կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների արտադրությամբ: Այժմ ապակուլակացումը կատարվում է հենց իրենց՝ չքավոր և միջակ մասսաների կողմից, վորոնք կենսագործում են համատարած կոլեկտիվացումը: Այժմ ապակուլակացումը համատարած կոլեկտիվացման ռայոններում այլևս սոսկական վարչական մի միջոց չէ: Այժմ ապակուլակացումն օյնտեղ կոլտնտեսությունների դոյացման և զարգացման բաղկացուցիչ մասն է: Ահա թե ինչու ծիծաղելի յե և լուրջ բան չե այժմ յերկար ու բարակ խոսել ապակուլակացման մասին: Գլուխը կտրելուց հետո մազերի համար սուղ չեն անում:

«Красная Звезда»-յի 16-րդ համարում ղեկավարած և ընդհա-
նուր առմամբ անկասկած ճիշտ՝ «Կուլակութեան» վորպես դասա-
կարգի լիկվիդացիան» հոդվածում հեղինակի ձեռնարկումների
մեջ կա յերկու անճշտություն: Ինձ թվում է, վոր այդ անճշտու-
թյուններն անհրաժեշտ է ուղղել:

1) Հոդվածում ասված է.

«Վերականգնման շրջանում մենք կիրառում եյինք քաղաքի և գյուղի կա-
պիտալիստական տարրերի սահմանափակման քաղաքականությունը: Վերա-
կառուցման շրջանի սկզբնավորումով սահմանափակման քաղաքականու-
թյունից մենք անցանք այդպիսիները վանելու՝ քաղաքականության»:

Այս դրույթը սխալ է: Կապիտալիստական տարրերի սահ-
մանափակման քաղաքականությունը և նրանց վանելու քաղաքա-
կանությունը—յերկու տարրեր քաղաքականություն չեն: Դա միև-
նույն քաղաքականությունն է: Գյուղի կապիտալիստական տար-
րերին վանելը կապիտալիստական տարրերը սահմանափակելու,
կուլակների չահագործողական տենդենցները սահմանափակելու,
քաղաքականության անխուսափելի արդյունքն է և նրա բաղկա-
ցուցիչ մասը: Գյուղի կապիտալիստական տարրերի վանումը
գեոկուլակությունն իբրև դասակարգ վանել չեն: Գյուղի կապի-
տալիստական տարրերի վանումը—դա կուլակության այն առան-
ձին ջոկատների վանումն ու հազթահարումն է, վորոնք չեն դի-
մացել հարկային ճնշման, չեն դիմացել խորհրդային իշխանության
սահմանափակիչ միջոցներին: Հասկանալի չէ, վոր կուլակության
չահագործողական տենդենցները սահմանափակելու, գյուղի կա-
պիտալիստական տարրերը սահմանափակելու քաղաքակա-
նությունը չի կարող չհասցնել կուլակության առանձին ջոկատ-
ները վանելուն: Այդ իսկ պատճառով կուլակության առանձին ջո-
կատների վանումը չի կարող այլ կերպ բացատրվել, բայց յեթե
վորպես գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու

քաղաքականության անխուսափելի արդյունք և դրա բաղկացուցիչ
մասը:

Մենք այդ քաղաքականությունն ենք վարել վոչ միայն վերա-
կանդնման շրջանում, այլև վերակառուցման շրջանում, այլև XV
համագումարին հաջորդող շրջանում (1927 թ. գեկտեմբերին),
այլև մեր կուսակցության XVI կոնֆերանսի շրջանում (1929
թվի ապրիլին), ինչպես նաև այդ կոնֆերանսից հետո մինչև
1929 թվի ամառը, յերբ մեղանում սկսվեց համատարած կո-
լեկտիվացման շրջանը, յերբ բեկում առաջացավ՝ կուլակու-
թյունն իբրև դասակարգ վերացնելու քաղաքականության ուղ-
ղությունը:

Յեթե քննության առնենք կուսակցության կարևորագույն դո-
կումենտները, սկսելով թեկուզ հենց 1925 թվի գեկտեմբերին տե-
ղի ունեցած XIV համագումարից (տես Կենտկոմի գեկուցման
առթիվ ընդունված բանաձևը) և վերջացնելով XVI կոնֆերան-
սով 1929 թվի ապրիլին (տես «Գյուղատնտեսության վերել-
քի ուղիների մասին» ընդունված բանաձևը),— ապա չի կարելի
չեկատել, վոր «Կուլակության չահագործողական տենդենցները
սահմանափակելու» կամ «կապիտալիզմի աճումը գյուղում սահ-
մանափակելու» մասին ընդունված թեղիսը միշտ դուգորդվում
է «գյուղի կապիտալիստական տարրերը վանելու», կամ՝ «գյուղի
կապիտալիստական տարրերը հաղթահարելու» թեղիսին:

Այս ի՞նչ է նշանակում:

Այս նշանակում է, վոր գյուղի կապիտալիստական տարրերը
վանելու քաղաքականությունը կուսակցության չի անջատում
կուլակության չահագործողական տենդենցները սահմանափակելու
գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու քաղա-
քականությունից:

Կուսակցության XV համագումարը, ինչպես և XVI կոնֆե-
րանսը, լիովին կանգնած է «գյուղատնտեսական բուրժուազիայի
չահագործողական տենդենցները սահմանափակելու» քաղաքակա-
նության բաղալի վրա (XV համագումարի բանաձևը՝ «Գյուղում
կատարելիք աշխատանքի մասին»), «կապիտալիզմի զարգացումը
գյուղում սահմանափակող նոր միջոցներ կիրառելու» քաղաքա-
կանության բաղալի վրա (տես՝ նույն բանաձևը), «կուլակների
չահագործողական տենդենցները վճռականապես սահմանափակե-
լու» քաղաքականության բաղալի վրա (տես՝ XV համագումարի
բանաձևը հնգամյակի մասին), «կուլակի վրա հարձակվելու» քաղա-

քականության բաղադրի վրա՝ «կուլակին և մասնավորին հետագայում ավելի սխտեմատիկ և ավելի համառ սահմանափակելուն գիմելու» իմաստով (տես նույն բանաձևը), քաղաքում և գյուղում յեղած «մասնավոր-կապիտալիստական տնտեսության տարրերն ավելի վճռական կերպով վանելու» քաղաքականության բաղադրի վրա (տես XV համագումարի բանաձևը կենտկոմի դեկլեման առթիվ) :

Ուրեմն և ա) իրավացի չէ հիշյալ հոդվածի հեղինակը, յերբ վորպես յերկու տարբեր քաղաքականություն է պատկերացնում կապիտալիստական տարրերի սահմանափակման քաղաքականությունը և դրանց վանելու քաղաքականությունը: Փաստերը վկայում են, վոր այստեղ մենք դործ ունենք կապիտալիզմը սահմանափակելու մեկ ընդհանուր քաղաքականության հետ, վորի բաղկացուցիչ մասն ու հետևանքն է հանդիսանում կուլակության առանձին ջոկատների վանումը:

Ուրեմն և բ) անիրավացի չէ հիշյալ հոդվածի հեղինակը, յերբ պնդում է, թե գյուղի կապիտալիստական տարրերի վանումն սկսվել է միայն վերակառուցման շրջանում, XV համագումարի շրջանում: Իրականում վանումը տեղի չէ ունեցել և՛ XV համագումարից առաջ, և՛ XV համագումարից հետո, և՛ վերակառուցման շրջանում: XV համագումարի շրջանում կուլակության չահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականությունը միայն ուժեղացվում է նոր լրացուցիչ միջոցներով, վորպիսի կապակցությամբ և պետք է ավելի ուժեղանար կուլակության առանձին ջոկատների վանումը:

2) Հոդվածում ասված է.

«կուլակությունն իրրե դասակարգ վերացնելու քաղաքականությունը լճովին բղխում է կապիտալիստական տարրերը վանելու քաղաքականությունից՝ այդ քաղաքականության շարունակությունը հանդիսանալով նոր ետադում»:

Այս դրույթը ճշտորոշ չէ և այդ պատճառով սխալ է: Հասկանալի չէ, վոր կուլակությունն իրրե դասակարգ վերացնելու քաղաքականությունը յերկնից ընկնել չեր կարող: Դա նախապատրաստված եր սահմանափակման ամբողջ նախընթաց շրջանում և հետևաբար՝ նաև գյուղի կապիտալիստական տարրերը վանելու քաղաքականությամբ: Սակայն սա դեռ չի նշանակում, թե այդ քաղաքականությունն արմատապես չի տարրերվում գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու (և վանելու) քաղաքականությունից, վոր նա, իբր թե, սահմանափակման քա-

ղաքականության շարունակությունն է: Ասել այնպես, ինչպես մեր հեղինակն է ասում, նշանակում է թիտել 1929 թվի ամառվանից գյուղի զարգացման մեջ առաջացած բեկման առկայությունը: Ասել այդպես, դա նշանակում է թիտել այն փաստը, վոր մենք այս ժամանակամիջոցում չըջադարձ ենք կատարել գյուղի մեր քաղաքականության մեջ: Ասել այդպես, նշանակում է իդեոլոգիական վորոշ պատասխան ստեղծել մեր կուսակցության աջ տարրերի համար, վորոնք այժմ աշխատում են կռիւն XV համագումարի վորոշումներին՝ ընդդէմ կուսակցության նոր քաղաքականության, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ ընկ. Յրուսկինն եր կռիւն XV համագումարի վորոշումներին՝ կոտնտեսություններ և խորհանտեսություններ հիմնելու քաղաքականության դէմ:

Ինչի՞ց եր յենում XV համագումարը, հռչակելով գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակման (և նրանց վանելու) քաղաքականությունը: Նրանից, վոր չնայած կուլակության այդորինակ սահմանափակման՝ կուլակությունն իրրե դասակարգ այնուամենայնիվ դեռ միառժամանակ պետք է պահպանի իր գոյությունը: Այս հիման վրա XV համագումարն իր ուժի մեջ պահեց հողի վարձակալության որենքը՝ քաջ գիտակցելով, վոր վարձակալ են հանդիսանում ըստ մեծի մասին կուլակները: Այս հիման վրա XV համագումարն ուժի մեջ պահեց գյուղի վարձու աշխատանքի որենքը՝ պահանջելով ճշտորեն կիրառել այդպիսին: Այս հիման վրա մեկ անգամ ևս հռչակվեց ապակուլացման անթույլատրելիությունը: Հակասո՞ւմ են արդյոք այս որենքները, այս վորոշումները գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու (և վանելու) քաղաքականությանը: Անտարակույս, վա՛չ: Հակասո՞ւմ են արդյոք այս որենքները, այս վորոշումները կուլակությունն իրրե դասակարգ վերացնելու քաղաքականությանը: Անկասկած, այո: Հետևաբար, այդ որենքները և այդ վորոշումներն այժմ հարկ է լինելու մի կողմ դնել համատարած կոլեկտիվացման շրջաններում, վորի ծավալումը վոչ թե որեցոր, այլ ժամ առ ժամ է աճում:

Սրանից հետո կարելի՞ չէ միթե պնդել, թե կուլակությունն իրրե դասակարգ վերացնելու քաղաքականությունը գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու (և վանելու) քաղաքականության շարունակությունն է: Պարզ է, վոր չի կարելի:

Հիշյալ հոդվածի հեղինակը մոռանում է, վոր չի կարելի

վանել կուլակների դասակարգն իբրև դասակարգ՝ հարկային և բոլոր այլ հարգի սահմանափակման միջոցներով՝ այդ դասակարգի ձեռքին քողակելով արտադրության միջոցները՝ հողից ազատորեն ոգտվելու իրավունքով հանդերձ և պահպանելով մեր պրակտիկայում դյուդի վարձու աշխատանքի որենքը, վարձակալության որենքը և ապակուլակացման արգելքը։ Հեղինակը մոռանում է, վոր կուլակության շահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականության պայմաններում կարելի չի մտածել կուլակության սոսկ առանձին ջոկատները վանելու մասին, մի բան, վոր չի հակասում, այլ ընդհակառակը՝ նախատեսում է կուլակության առժամանակյա պահպանություն իբրև դասակարգի։

Կուլակությունն իբրև դասակարգ վանելու համար դեռ բավական չե նրա առանձին ջոկատների սահմանափակման և վանելու քաղաքականությունը։ Կուլակությունն իբրև դասակարգ վանելու համար անհրաժեշտ է բաց պայքարում ջախջախել այդ դասակարգի ընդդիմադրությունը և գրկել նրան իր դոյություն և զարգացման արտադրական աղբյուրներից (հողից ազատորեն ոգտվելը, արտադրության գործիքները, վարձակալությունը, վարձու աշխատանքից ոգտվելու իրավունքը և այլն)։ Հենց այս է ահա չրջադարձը դեպի կուլակությունն իբրև դասակարգ վերացնելու քաղաքականությունը։ Առանց սրան՝ կուլակությունն իբրև դասակարգ վերացնելու զրույցները դատարկ բարբալանքներ են՝ հաճելի և ձեռնտու միայն աջ ուղիներն են։ Առանց այս ամենի անհնարին է դյուդի վորևս լուրջ և առավել ևս՝ համատարած կոլեկտիվացում։ Այս բանը լավ են ըմբռնել մեր դյուդի չքավորներն ու միջակները, վորոնք ջախջախում են կուլակությունը և կենսագործում համատարած կոլեկտիվացումը։ Այս բանը, ըստ յերևույթին, դեռևս չեն հասկանում մեր ընկերներից վոմանք։

Հետևաբար, կուլակության արգի քաղաքականությունը դյուդում հին քաղաքականության շարունակությունը չէ, այլ դյուդի կապիտալիստական տարրերը սահմանափակելու (և վանելու) հին քաղաքականությունից մի շրջադարձ է դեպի կուլակությունն իբրև դասակարգ վերացնելու նոր քաղաքականությունը։

Կոլտնտեսական շարժման աստիճանում խորհրդային իշխանության ձեռք բերած հաջողությունների մասին այժմ խոսում են բոլորը։ Նույնիսկ թշնամիները հարկադրված են խոստովանել լուրջ հաջողությունների առկայությունը։ Իսկ այդ հաջողություններն իսկապես խոշոր են։

Փաստ է, վոր առ 20 փետրվարի ս. թ. արդեն կոլեկտիվացված է ԽՍՀՄ դյուդացիական տնտեսությունների 50 տոկոսը։ Այդ նշանակում է, վոր մենք հնգամյա պլանն առ 20 փետրվարի 1930 թ. գերապատարել ենք ավելի, քան կրկնակի չափով։

Փաստ է, վոր կոլտնտեսություններն առ 28 փետրվարի այս տարվա կարողացել են արդեն դարձնան ցանքերի համար հավաքել 36 միլիոն ցնտերից ավելի սերմացու, այսինքն՝ պլանի 90 տոկոսից ավելին, այսինքն՝ մոտ 220 միլ. փուլ։ Չի կարելի չխոստովանել, վոր 220 միլ. փուլ սերմացու միայն կոլտնտեսական դժով հավաքելը հացամթերման պլանի հաջող կատարումից հետո հսկայական մի նվաճում է։

Ի՞նչ է վկայում այս բոլորը։

Այն, վոր գյուղի արմատական շրջադարձը դեպի սոցիալիզմ կարելի չի համարել արդեն ապահովված։

Հարկ չկա ապացուցելու, վոր այդ հաջողությունները հրեկայական նշանակություն ունեն մեր յերկրի բախտի համար, ամբողջ բանվոր դասակարգի համար՝ վորպես մեր յերկրի դեկավար ուժի, վերջապես՝ հենց իր՝ կուլակության համար։ Չխոսելով արդեն ուղղակի գործնական հետևանքների մասին, դրանք՝ այդ հաջողությունները հսկայական նշանակություն ունեն հենց իր՝ կուլակության ներքին կյանքի, մեր կուլակության դաստիարակության համար։ Նրանք մեր կուլակության

մեջ ամրացնում են արիություն և հավատի վողի իր ուժերի նկատմամբ: Նրանք բանվոր դասակարգը ղինում են մեր գործի հաղթանակի հավատով: Նրանք մեր կուսակցությունը մոտեցնում են նորանոր միլիոնավոր ռեզերվներ:

Այստեղից կուսակցության առաջ խնդիր է դրվում ամրապնդել ձեռք բերված հաջողությունները և պլանաչափ ռզտագործել նրանց՝ հետագա առաջխաղացման համար:

Սակայն հաջողություններն ունեն նաև իրենց ստվերոտ կողմը, առանձնապես յերբ նրանք համեմատաբար «հեշտ» են ձեռք բերվում, այսպես կոչված՝ «անակնկալի» կարգով: Այդպիսի հաջողությունները յերբեմն պատվաստում են ինքնահավանություն և մեծամտության վողի: «Մենք ամեն ինչ կարող ենք առնել», «Մեզ համար ամեն ինչ դատարկ բան է»: Նրանք, այդ հաջողությունները հաճախ արբեցնում են մարդկանց, բնդվորում նրանց դուրին սկսում է պտովել հաջողություններից, կորչում է չափի զգացմունքը, կորչում է իրականությունը ըմբռնելու ընդունակությունը, հանգես է գալիս իր ուժերը դերազնահատելու և հակառակորդի ուժերը թերազնահատելու ձգտում, հանգես են գալիս ավանտյուրիստական վործեր՝ «ձեռաց» լուծելու սոցիալիստական շինարարության բոլոր խնդիրները: Այս դեպքում արդեն տեղ չի մնում հող տանելու ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու և հետագա առաջխաղացման համար նրանց պլանաչափ ռզտագործելու մասին: Ինչ կարիք կա ամրապնդելու ձեռք բերված հաջողությունները, մենք առանց դրան ել կկարողանանք «ձեռաց» հասնել սոցիալիզմի կատարյալ հաղթանակին: «Մենք ամեն ինչ կարող ենք առնել», «Մեզ համար ամեն ինչ դատարկ բան է»:

Այստեղից կուսակցության առաջ խնդիր է դրվում. վճռական պայքար մղել գործի համար վտանգավոր և վնասակար այդ տրամադրությունների դեմ և դրանց դուրս քչել կուսակցությունից:

Չի կարելի ասել, թե գործի համար վտանգավոր և վնասակար այս տրամադրությունները քիչ թե շատ լայն տարածում ունեն մեր կուսակցության շարքերում, սակայն դրանք, այդ տրամադրություններն աչնուամենայնիվ կան մեր կուսակցության մեջ, և հիմք չկա պնդելու, թե նրանք չեն ուժեղանա: Մեծ յեթե դրանք, այդ տրամադրությունները մեղանում քաղաքա-

ցիական իրավունք ստանան, ապա կարելի յե չկասկածել, վոր կոլտնտեսական շարժման գործն զգալի չափով կթուլանա և այդ շարժման վիժեցման վտանգը կարող է դառնալ իրական:

Այստեղից մեր մամուլի առաջ խնդիր է դրվում. սիստեմատիկորեն մերկացնել այդ և դրանց նման հակալենինյան տրամադրությունները:

Միջանի փաստ.

1) Մեր կոլտնտեսական քաղաքականության հաջողությունները բացատրվում են ի միջի այլոց նրանով, վոր նա, այդ քաղաքականությունը հենվում է կոլտնտեսական շարժման կամավորության վրա և հաշվի յե առնում ԽՍՀՄ տարբեր շրջանների պայմանների բազմազանությունը: Չի կարելի ուժով կոլտնտեսություններ հիմնել: Այդ կլիներ հիմարություն և հետադիմություն: Կոլտնտեսական շարժումը պետք է հենվի գյուղացիության հիմնական մասսաների ահտիվ աջակցության վրա: Չի կարելի դարդացած շրջաններից կոլտնտեսական շինարարության որինակները մեքենայորեն պատվաստել չղարգացած շրջաններում: Այդ կլիներ հիմարություն և հետադիմություն: Այդպիսի «քաղաքականությունը» մի հարվածով կարատավորեր կոլեկտիվացման քաղափարը: Պետք է մանրակրկիտ հաշվի առնել պայմանների բազմազանությունը ԽՍՀՄ տարբեր շրջաններում կոլտնտեսական շինարարության տեմպն ու մեթոդները վորոշելիս:

Կոլտնտեսական շարժման մեջ բոլոր շրջաններից առաջ են գտնվում հացահատիկային շրջանները: Ինչո՞ւ: Վորովհետև, նախ՝ այդ շրջաններում ամենից շատ մենք ունենք արդեն ամրապնդված խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ, վորոնց խորհիվ գյուղացիները հնարավորություն ունեցան համոզվելու նոր տեխնիկայի ուժի նշանակության, տնտեսության նոր՝ կոլեկտիվ կազմակերպման ուժի ու նշանակության մեջ: Վորովհետև, յերկրորդ՝ այդ շրջանները կուլակի դեմ պայքարելու յերկամյա դպրոց են անցել հացամթերման կամպանիայի ժամանակ, վորը չեք կարող չհեշտացնել կոլտնտեսական շարժման գործը: Վորովհետև, վերջապես՝ այդ շրջաններին ամենաուժեղ չափով վերջին տարիներս մատակարարում եյին արդյունաբերական կենտրոնների լավագույն կադրեր:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր առանձնապես նպաստավոր

այդ պայմանները կան նաև այլ շրջաններում, որինակ, մեր Հյուսիսային մարզերի նման սպառողական շրջաններում կամ, ասենք՝ Թուրքեստանի նման դեռևս հետամնաց ազգութիւնների շրջաններում:

Վո՛չ, չի կարելի ասել:

Պարզ է, վոր ԽՍՀՄ տարրեր շրջանների պայմանների բաղձազանութիւնը հաշիւի առնելու սկզբունքը, կամավորութիւնի սկզբունքի հետ միասին, կոլտնտեսական շարժման ամենալուրջ նախադրյալներից մեկն է:

Սակայն յերբեմն իրոք ի՞նչ է պատահում մեղնում: Կարելի՞ չէ արդէոք ասել, վոր կամավորութիւնի և տեղական առանձնահատկութիւնների հաշվառման սկզբունքը չի խախտվում մի շարք շրջաններում: Վո՛չ, դժբախտաբար այդ չի կարելի ասել, Որինակ, հայտնի չէ, վոր սպառողական շերտի մի շարք Հյուսիսային ռայոններում, վորտեղ անհապաղ կոլտնտեսութիւններ կազմակերպելու նպատակով պայմանները համեմատաբար քիչ են, քան հացահատիկային շրջաններում, շատ անգամ աշխատում են կոլտնտեսութիւն կազմակերպելու նախապատրաստական աշխատանքը փախարիմել կոլտնտեսական շարժման չինովնիկական գեկերետավորումով, կոլտնտեսութիւնների աճման թղթի վրա մնացող բանաձևերով և թղթի վրա կազմակերպելով կոլտնտեսութիւններ, վորոնք իրականում դեռ գոյութիւն չունեն, սակայն վորոնց «գոյութիւն» մասին կան պարծենկոտ բանաձևերի հոլտեր: Կամ վերցնենք Թուրքեստանի միջանի շրջանները, վորտեղ ավելի քիչ նպատակով պայմաններ կան անհապաղ կոլտնտեսութիւններ կազմակերպելու համար, քան սպառողական շերտի Հյուսիսային մարզերում: Հայտնի չէ, վոր Թուրքեստանի մի շարք շրջաններում արդեն փորձեր են արվել «հասնելու և զերազանցելու» ԽՍՀՄ ստանվոր շրջանները՝ սպառնալով գինվորական ուժով, սպառնալով զրկել վոտզման ջրից և արդյունաբերական ապրանքներից այն գյուղացիներին, վորոնք առայժմ չեն ուզում մտնել կոլտնտեսութիւն մեջ:

Ի՞նչ լնդհանուր բան կարող է լինել սնտեր Պրիշիբեյեվի այդ «քաղաքականութիւն» և կուսակցութիւնի քաղաքականութիւնի միջև, վոր հիմնված է կամավորութիւնի և տեղական պայմանների հաշվառման վրա՝ կոլտնտեսական շինարարութիւնի գործում: Պարզ է, վոր նրանց միջև ընդհանուր վոչ մի բան չկա է չի կարող լինել:

Ո՞ւմ են սկսած կոլտնտեսական շարժման այդ խեղաթյուրումները, նրա չինովնիկական այդ գեկերետավորումը, այդ անարժան սպառնալիքները գյուղացիներին: Վոչ վոքին՝ բացի մեր թշնամիներից:

Ի՞նչ հետևանք կարող են ունենալ այդ խեղաթյուրումները: Մեր թշնամիների ուժեղացումը և կոլտնտեսական շարժման վարկաբեկումը:

Պարզ չէ, վոր այդ խեղաթյուրումների հեղինակները, վորոնք իրենց «ձախ» են յերևակայում, իրոք ջուր են ածում այդ սպրտունիզմի ջրաղացին:

2) Մեր կուսակցութիւնի քաղաքական ստրատեգիայի մեծագույն արժանիքներից մեկն այն է, վոր նա յուրաքանչյուր տվյալ ժամենտում գիտն ընտրել շարժման հիմնական ողակը, վորին կառչելով՝ նա հետո ամբողջ շղթան ձգում է մի ընդհանուր նպատակի, վորպեսզի կարողանա խնդրը լուծել: Կարելի՞ չէ ասել, վոր կուսակցութիւնը, կոլտնտեսական շինարարութիւնի սխտեմում ընտրել է կոլտնտեսական շարժման հիմնական ողակը: Այո, կարելի չէ և հարկավոր է:

Վո՞րն է այդ հիմնական ողակը:

Գուցե հոգոգտագործման ընկերութիւնը: Վո՛չ, և վոչ: Հոգոգտագործման ընկերութիւնները, վորտեղ արտադրութիւնի միջոցները դեռ չեն հանրայնացված, արդեն հանդիսանում են կոլտնտեսական շարժման անցյալ աստիճանը:

Գուցե գյուղատնտեսական կոմունա՞ն: Վո՛չ, կոմունան չէ: Կոմունաները դեռևս հասուկենտ յերեույթներ են կոլտնտեսական շարժման մեջ: Գյուղատնտեսական կոմունաների՝ վորպես գերակշռող ձևի համար, վորտեղ հանրայնացվում է վոչ միայն ամբողջ արտադրութիւնը, այլև բաշխումը, պայմանները դեռ չեն հասունացել:

Տվյալ ժամենտում կոլտնտեսական շարժման հիմնական ողակը և նրա գերակշիռ այն ձևը, վորին պետք է կառչել ներկայումս, հանդիսանում է գյուղատնտեսական արտելը:

Գյուղատնտեսական արտելում գլխավորապես հացահատիկային տնտեսութիւնի մեջ են հանրայնացված արտադրութիւնի հիմնական միջոցները՝ աշխատանքը, հողագործութիւնը, մեքենաները և այլ ինվենտարը, լծկանները և տնտեսական շենքերը: Նրանում չեն համայ-

նացվում՝ տնտեսողներին կից հողամասերը (փոքր բանջարանոցները, փոքրիկ պարտեզները), բնակելի շենքերը, կաթնատու անասունների վորոշ մասը, մանր անասունները, տնային թռչունները և այլն: Արտելը կալուստեսակամ շարժման հիմնական ուղակն է, վորովհետև նա հացահատիկային պրոբլեմը լուծելու ամենանպատակահարմար ձևն է: Իսկ հացահատիկային պրոբլեմն ամբողջ գյուղատնտեսության սխտեմի հիմնական ուղակն է, վորովհետև առանց այդ պրոբլեմը լուծելու անկարելի չէ լուծել վոչ անասնաբուծության (խոշոր և մանր) պրոբլեմը, վոչ տեխնիկական և հատուկ մշակույթների պրոբլեմը, վորոնք տալիս են հիմնական հումուլթ արդյունաբերության համար: Ահա թե ինչու գյուղատնտեսական արտելը տվյալ մոմենտում կոտնտեսական շարժման հիմնական ուղակն է:

Դրանից է յեղնում կոլտնտեսությունների որինակելի կանոնադրությունը, վորի վերջնական բնագիրը տպագրվում է այսօր^{*)}:

Դրանից էլ պետք է յեղեն մեր կուսակցական և խորհրդային աշխատողները, վորոնց պարտականություններից մեկն է սոսումնասիրել այդ կանոնադրությունը ըստ ելույթյան և ամբողջովին կենսագործել այն:

Այս է կուսակցության դրույթը տվյալ մոմենտում:

Կարելի՞ չէ ասել, վոր կուսակցության այդ դրույթը կենսագործվում է առանց խախտումների և խեղաթյուրումների: Վոչ, դժբախտաբար այդ չի կարելի ասել: Հայտնի չէ, վոր ԽՍՀՄ մի շարք շրջաններում, վորտեղ կոլտնտեսությունների գոյության համար միջվող պայքարը դեռ հեռու չէ վերջանալուց, և վորտեղ արտելները դեռ չեն ամրացվել, փորձեր են կատարվում դուրս գալու արտելի շրջանակից և միանգամից թռիչք գործելու դեպի գյուղատնտեսական կոմունան: Դեռ արտելը չի ամրապնդվել, իսկ նրանք արդեն «հանրայնացնում են» բնակելի շենքերը, մանր անասունները և տնային թռչունները, ընդվորում այդ «հանրայնացումն» արտահայտվում է թղթի վրա, բյուրոկրատիկ դեկրետավորումով, վորովհետև դեռ չկան այնպիսի պայմաններ, վորոնք անհրաժեշտ դարձնեն այդ հանրայնացումը: Կարելի չէ կարծել, վոր հացահատիկային պրոբլեմն արդեն լուծված է կոլտնտեսություններում, վոր նա արդեն դե-

բաղանցված աստիճան է, և վոր ներկայիս հիմնական խնդիրն է վոչ թե հացահատիկային պրոբլեմի, այլ անասնաբուծության և թռչնաբուծության պրոբլեմի լուծումը: Հարց է ծագում, թե ԵՄ է պետք կոլտնտեսական շարժման տարբեր ձևերն իրար խառնելու այդ քալադյոդական «աշխատանքը»: Ո՞ւմ է հարկավոր այս հիմար և վնասակար առաջ վաղելը: Դրեդել կոլտնտեսական գյուղացուն բնակելի շենքերի, կաթնատու բոլոր անասունների, բոլոր մանր անասունների և տնային թռչունների հանրայնացումով, յերբ հացահատիկային պրոբլեմը դեռ չի լուծվել, յերբ դեռ չի ամրապնդվել կոլտնտեսության արտելային ձևը, — պարզ չե՞ միթե, վոր այդպիսի «քաղաքականությունը» կարող է հաճելի և ձեռնտու լինել միայն մեր վոխերիմ թշնամիներին: «Կրակոտ» հանրայնացողներից մեկը բանը հասցնում է նույնիսկ այնտեղ, վոր հրաման է ուղարկում արտելին, առաջարկելով «յերեք օրվա ընթացքում հաշվառման յենթարկել յուրաքանչյուր տնտեսության տնային բոլոր թռչունները», սահմանել հաշվառող և վերահսկող «հրամանատարների» հատուկ պաշտոններ, «գրավել արտելներում իշխող բարձունքները», «ստանձնել սոցիալիստական մարտերի հրամանատարությունն առանց լքելու դիրքերը», և հասկանալի չէ, ամբողջ արտելը ճեղմել բուռնցքի մեջ: Դա ի՞նչ բան է, — կոլտնտեսության ղեկավարության քաղաքականություն, թե նրա քայքայման և վախճանի քաղաքականություն: Յես էլ չեմ խոսում այն, յեթե կարելի չէ ասել, «հեղափոխականների» մասին, վորոնք արտել կազմակերպելու գործն սկսում են յեկեղեցու զանգերը վերցնելով: Զանգերը հանե՛լ — ասացեք խնդրեմ, վորպիսի՞ հեղափոխություն:

Ի՞նչպես է յեղել, վոր մեր միջավայրում առաջ են յեկել այդպիսի քալադյոդական վարժություններ «հանրայնացման» ասպարեզում, իրենց դիսից բարձր թռչելու ծիծաղաշարժ այդ փորձերը, վորոնց նպատակն է զանց առնել դասակարգերը և դասակարգային պայքարը, և վորոնք գործնականում ջուր են ածում մեր դասակարգային թշնամիների ջրաղացին: Դրանք կարող եյին առաջ գալ միայն մեր «դյուրին» և «անսպասելի» այն հաջողությունների միջոցով, վոր ձեռք ենք բերել կոլտնտեսական ինտարբության ասպարեզում: Դրանք կարող եյին առաջ գալ միայն մեր կուսակցության մի մասում գոյություն սունցող

*) „Правда“, 2 մարտի 1930 թ.

բյալագրական տրամադրությունների հետևանքով, թե՛ «Մենք ամեն ինչ կարող ենք անել», «Մեզ համար ամեն ինչ դատարկ բան է»: Դրանք կարող եյին առաջ դալ միայն այն պատճառով, վոր մեր միջանի ընկերների գլուխը պտտվեց հաջողություններից, և նրանք մի րոպե կորցրին մտքի պարզությունն ու հայացքի զգաստությունը:

Կոլտնտեսական շինարարության ասպարեզում մեր աշխատանքի գիծն ուղղելու համար պետք է վերջ տալ այդ տրամագրություններին:

Ներկայումս դա կուսակցության ռեքլամային խնդիրներից մեկն է: Ղեկավարման արվեստը լուրջ դարձ է: Զի կարելի հեռ մնալ շարժումից, վորովհետև հեռ մնալ—նշանակում է կտրվել մասսաներից: Սակայն չի կարելի նաև առաջ վաղել, վորովհետև առաջ վաղել—նշանակում է կորցնել կապը մասսաների հետ: Ով ուզում է շարժում գեկավարել և միևնույն ժամանակ պահպանել իր կապը միլիոնավոր մասսաների հետ, նա պետք է պայքար մղի յերկու հակառակ՝ և՛ հեռ մնացողների, և՛ առաջ վաղողների դեմ:

Մեր կուսակցությունն ուժեղ է և անպարտելի, վորովհետև ղեկավարելով շարժումը, նա գիտե պահպանել և բազմապատկել իր կապերը բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաների հետ:

Լրագրերից հայտնի չէ, վոր Ստալինի «Գլխավորությամբ հաջողությունների հետևանքով» հոդվածը և Կենտկոմի հայտնի վորոշումը «Կոլտնտեսական շարժման մեջ կուսակցական գծի աղավաղումների դեմ պայքարելու մասին» բազմաթիվ արձագանքներ առաջ բերին կոլտնտեսական շարժման պրակտիկների շարքերում: Այդ կապակցությամբ յես վերջին ժամանակներս ստացել եմ մի շարք նամակներ ընկեր կոլտնտեսականներից, վորոնցով նրանք պահանջում են պատասխանել իրենց այդ նամակներում դրված հարցերին: Իմ պարտականությունն էր պատասխանել նամակներին մասնավոր գրադրության կարգով: Բայց այդ բանն անհնար յեղավ, վորովհետև նամակների կեսից ավելին չունեն հեղինակի հասցեն (մոռացել եյին հասցեներն ուղարկել): Մինչդեռ այդ նամակներում չոչափված հարցերն ահագին քաղաքական հետաքրքրություն են ներկայացնում բոլոր մեր ընկերների համար: Բացի դրանից, հասկանալի չէ, վոր յես չեյի կարող առանց պատասխանի թողնել և այն ընկերներին, վորոնք մոռացել եյին ուղարկել իրենց հասցեները: Այս բոլորի հետևանքով յես կանգնած եյի մի անհրաժեշտության առաջ—պատասխանել ընկեր կոլտնտեսականների նամակներին հրապարակով, այսինքն՝ մամուլի միջոցով, վերցնելով այդ նամակներից գործի համար հարկավոր բոլոր հարցերը: Յես ավելի մեծ սիրող ձեռնարկեցի այդ գործը, վորովհետև այդ առթիվ ունեյի Կենտկոմի ուղղակի վորոշումը:

Առաջին հարց.—Վո՞րն է գյուղացիական հարցում յեղած սխալների արմատը:

Պատասխան.—Միջակի նկատմամբ ճիշտ մոտեցում չունենալը: Միջակի հետ տնտեսական հարաբերությունների առաջադրում բռնություն թույլ տալը: Այն, վոր մոռացվել է, վոր տնտեսական գոգումը միջակ մասսաների հետ պետք է կառուցվի

վոչ թե բռնի միջոցների հիման վրա, այլ միջակի հետ համաձայնություն, միջակի հետ դաշինքի հիման վրա: Այն, վոր մոռացվել է, վոր կոլտնտեսական շարժման հիմքը տվյալ մոմենտում բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքն է միջակի հետ՝ ընդդեմ կապիտալիզմին առհասարակ և ընդդեմ կուլակության առանձնապես:

Քանի հարձակումը կուլակության վրա կատարվում էր միջակի հետ մի ճակատով, ամեն ինչ լավ էր դնում: Բայց, յերբ մեր ընկերները միջանիսը հաջողություններից հարբած սկըսեցին աննկատելիորեն սահել կուլակի վրա հարձակման ճանապարհից միջակի դեմ պայքարելու ճանապարհը, յերբ նրանք կոլեկտիվացման բարձր տոկոսի հետևից ընկնելով՝ միջակի նկատմամբ սկսեցին բռնություն դրժադրել՝ զրկելով նրան ընտրական իրավունքից, «ապակուլակացնելով» և եքսպրոպրիացիայի յենթակցելով նրա ունեցածը, — հարձակումն սկսեց աղավաղվել, միջակի հետ ունեցած միասնական ճակատն սկսեց խախտվել, և պարզ բան է, վոր կուլակը հնարավորություն ստացավ փորձեր անել նորից փոտքի կանգնելու:

Մոռացել եյին, վոր բռնությունը, վորն անհրաժեշտ է և ուղտակար մեր դասակարգային թշնամիների դեմ պայքարելու գործում, անթույլատրելի է կորստաբեր է մեր դաշնակից միջակի նկատմամբ:

Մոռացել եյին, վոր հեծելազորային հարձակումները, վորոնք անհրաժեշտ են և ուղտակար ռազմական բնույթի խնդիրներ լուծելու համար, անպետք են և կորստաբեր կոլտնտեսական չինարարության խնդիրները լուծելիս, վորն, ի դեպ, կազմակերպվում է միջակի հետ դաշնակցած:

Ահա թե ինչ է ասում Լենինը միջակի հետ տնտեսական հարաբերություններ պահպանելու մասին.

«Ամենից շատ մենք պետք է հիմնվենք այն ճշմարտության վրա, վոր այստեղ բռնության մեթոդներով ըստ ելույթյան վոչ մի արդյունքի չի կարելի հասնել: Այստեղ տնտեսական խնդիրը բոլորովին այլ կերպ է դրված: Այստեղ չկա այն վերնախավը, վորը կարելի լինի կտրել թողնելով ամբողջ ֆունդամենտը, ամբողջ շենքը: Այն վերնախավը, վոր կազմում էյին քաղաքում կապիտալիստները, այստեղ չկա: Գործել այստեղ բռնությամբ — նշանակում է կործանել ամբողջ գործը... Ձեռն ալելի հիմար բան, քան միջակ գյուղացու հետ տնտեսական հարաբերություններ պահպանելու ասպարեզում բռնության մասին անգամ մտածելը» (Հ. XVI, էջ 150—151):

Այնուհետև՝

«Միջակ գյուղացիության նկատմամբ բռնություն դրժադրելը մեծագույն վնաս է: Դա մի բազմամարդ, բազմամիլիոն խավ է: Անգամ Յեվրոպայում, վորտեղ նա վոչ մի տեղ չի հասնում այդպիսի ուժի, վորտեղ հրկայրեն զարգացած է տեխնիկան, կուլտուրան, քաղաքային կյանքը և յերկաթուղիները, վորտեղ ամենից ավելի հեշտ կլինեն մտածել այդ մասին, — վոչ վոք, ամենահեղափոխական սոցիալիստներից և վոչ մեկը յերբեք չի առաջարկել բռնի միջոցներ կիրառել միջակ գյուղացիության վերաբերմամբ» (Հ. XVI, էջ 150):

Կարծեմ պարզ է:

Յերկրորդ հարց. — վորո՞նք են կոլտնտեսական շարժման մեջ յեղած գլխավոր սխալները:

Պատասխան. — Այդ սխալներն առնվազն յերեք են:

1) Ուխտել են կամավորության լենինյան սկզբունքը կոլտնտեսություններ կառուցելիս: Ուխտել են կուլակացության հիմնական ցուցումները և գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը՝ կոլտնտեսության չինարարության կամավորության մասին:

Լենինիդմն ուսուցանում է, վոր գյուղացիությունը պետք է փոխադրել կոլեկտիվ տնտեսության ուղիների վրա կամավորության կարգով՝ համոզելով հասարակական կոլեկտիվ տնտեսության առավելությունների մեջ՝ հանդես պահատական տնտեսություն:

Լենինիդմն ուսուցանում է, վոր համոզել գյուղացուն կոլեկտիվ տնտեսության առավելության մեջ կարելի յե միայն այն դեպքում, յերբ ցույց տրվի նրանց և ապացուցվի գործով ու փորձով, վոր կոլտնտեսությունն անհատական տնտեսությունից լավ է, վոր նա անհատական տնտեսությունից ավելի շահավետ է և վոր կոլտնտեսությունը հնարավորություն է տալիս գյուղացուն չքավորին ու միջակին աղատվելու կարիքից ու թշվառությունից: Լենինիդմն ուսուցանում է, վոր այս պայմաններից դուրս կոլտնտեսությունները չեն կարող հաստատուն լինել: Լենինիդմն ուսուցանում է, վոր կոլեկտիվ տնտեսությունը մարդկանց վզին ուժով փաթաթելու յուրաքանչյուր փորձ և կոլտնտեսությունները հարկադրման կարգով ստեղծելու յուրաքանչյուր փորձ կարող է տալ միայն բացասական արդյունք, կարող է միայն խրտնեցնել գյուղացուն կոլտնտեսական շարժումից:

Յեւ իբրեւ, քանի այդ հիմնական կանոնը պահպանվում էր, կոտնտեղությունը տալիս էր հաջողություն հաջողության հետեւից: Սակայն մեր միջանի ընկերները՝ հարաժե հաջողություններով, սկսեցին արհամարհել այդ կանոնը, սկսեցին չափազանց շտապողականություն հայտարարել և ընկնելով կոլեկտիվացման բարձր տեղի հետեւից, սկսեցին պատվաստել կոլտնտեսությունները հարկադրական կարգով: Զարմանալի է, վոր այդպիսի «քաղաքականություն» բացասական արդյունքներին յերկար սպասելու կարիք չեղավ: Հապճեպ կերպով առաջ յեկած կոլտնտեսություններն սկսեցին հալվել նույնպիսի արագություն, վորով ծագել էին, իսկ դեռ յերեկ դեպի կոլտնտեսություններն անհուն վստահությամբ վերաբերվող գյուղացիության մի մասն սկսեց յերես դարձնել նրանցից:

Այդ է առաջին և գլխավոր սխալը կոլտնտեսական շարժման մեջ:

